№ 149 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 10 ՅՈՒԼԻՍԻ

1913
ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 10 ՅՈՒԼԻՍԻ № 149

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ» Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak“
Խմբագրատան տէլէֆօն № 2—53.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.
Տպարանի տէլէֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ“.
TIFLIS, Rédaction du journal „MSCHAK“.

ՅՈՒԼԻՍԻ 1-Ի Ց ՄԻՆՉԵՎ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 6 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կ. նամակաղրոշմ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. շուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԻՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ:

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պիտիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К°, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիեննայում՝ Большая 38, Ֆարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թվի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կունենան բաժանորդավճար 10 ռուբլին, ծրիարար կը ստանան հետեւալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» բառասնամեակ»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Եղիսաբէթ Անանեան, բժ. Յովհաննէս Սարգսեան, Վարսենիկ Յովհաննիսեան և Մարիամ Յովհաննիսեան ԻԳԻԹԵԱՆՑՆԵՐԸ ցաւօք սրտի յայտնում են ազգականներին, ծանօթներին և ծիսականներին՝ առաջինին իր ամուսնու, երկրորդին իր հօր, երրորդին ու չորրորդը իրանց սկեսրայրի՝

ՍԱՐԳԻՍ աւագ-բահ. ԻԳԻԹԵԱՆՑԻ

մահը: Մարմնի յուղարկաւորութիւնը եղավ Բեւլաքանէից (Բելաքանական № 26) տունը, յուլիսի 10-ին, ցերեկվայ ժամը հինգ 5-ին դէպի ս. Մինաս եկեղեցին (Հաւլաբարում): Թաղումը հինգշաբթի, յուլիսի 11-ին, օծումից յետոյ, Խօջիվանքի գերեզմանատանը:
558. 2 1

ԲԺԻՇԿ

ՄԱԿԱՐԵԱՆՑԸ

Մայիսի 15-ից վերսկսց հիւանդների ընդունութիւնը

ՊԵՏԵՐԳՕՐՍԿՈՒՄ

Մասնագիտաբար—միզասեռական, վեներական սիֆիլիս և կաշուի հիւանդութիւններ:
Հասցէն՝ Верхній Сульваръ, д. Запаловой. (о.л.) առ. 401. 20—20

ՕՏԱՐՈՏԻ ՆՈՒՆՃՈՒՄՆԵՐ

Թիւրքիան իր զօրքերը ուղարկում է դէպի Բոլգարիայի սահմանները և գրաւում է նրա հողերը: Թիւրքերը անցել են դէպի Լիւլէ-Բուրգաս և նրան յայտարարել Թիւրքական: Այժմ ախորժակ են ստացել գնալ դէպի Ադրիանուպոլիս և նրան յետ վերցնել:

Իսկ ինչ է անում բոլգարական զօրքը: Նա ոչ մի ընդդիմութիւն չէ ցոյց տալիս և մտադիր էլ չէ ցոյց տալու ներկայ օրերում: Նա համարում է Թիւրքերի ներս խուժելը իբրև միջազգային ապօրինութիւն, իբրև տարաձերժ մի քայլ, որը անթոյլատրելի է ռազմական օրէնքով և էտիկայով: Բոլգարիան իր պատերազմը վերջացրել է Թիւրքիայի հետ և հաշտութեան դաշն է կնքել. ուստի ամեն մի նոր արշաւանք պէտք է նկատվի անթոյլատրելի՝ միջազգային սովորութիւնների համաձայն:

Անկասկած՝ Թիւրքերը իրանք լաւ են հասկանում իրանց արածի անպատեհութիւնը, բայց նրանք որոշել են արժէք տալ ամեն մի երեւոյթի, որը մի փոքր չափով կարող է հոգեբանական և գուցէ քաղաքական հրապոյրներ առաջ բերել Թիւրքական ամբոխի զգացմունքների համար:

Այդտեղ կայ և միջազգային տեսակէտի մի հաշիւ: Թիւրքիան յոյս ունի այդ եղանակով ձեռք բերել աւելի նըպաստաւոր դիրք՝ սակարկելու բալկանեան պետութիւնների հետ պատերազմական տուգանքի մասին: Թիւրքիան ցանկութիւն չունի պատերազմական տուգանք տալու և այժմ նա ցանկանում է ստեղծել այնպիսի պայմաններ, որ կարող լինի իր դիտաւորութիւնը առաջ տանել: Թիւրքիան լաւ գիտէ, որ իր արած քայլը չափազանց կասկածելի մի քայլ է, տարաձերժ և օտարոտի. բայց նա ձգում է իրան ամեն տեսակ արկածների մէջ այն նկատումով, որ գուցէ յանկարծ, պատահաբար մի ձեռնտու խաղ սարքի և մի որևէ շահ ապահովի իր համար:

Կ. Պոլսի ամբոխի համար Թիւրքական նոր նուաճումները թէև խորտուսիկ, բայց ժամանակաւոր միխիթարանքի նշանակութիւն ունեն: Անշուշտ՝ լուրջ պետական գործողների համար անարժան և ստորացնող ընաւորութիւն պէտք է ունենան օսմանեան զէնքի այն աջողութիւնները, որոնք ձեռք են բերված առանց հակառակորդի ընդդիմութեան, առանց պատերազմի. բայց Թիւրքիան այժմ ասպետական հանգանակի ցուցումներով չէ առաջնորդվում, այլ օրվայ շահի իւրացումներով:

Եւրոպական պետութիւնները թէև յայտնել են, որ Թիւրքական զօրաշարժի վրա նրանք նայում են իբրև ապօրինի մի գործողութեան վրա, որը անկարող է փոխել Լոնդոնի դեսպանախորհրդի որոշումները և խախտել միջազգային համագումարի որոշած սահմանները, բայց Թիւրքիան յոյսեր ունի, որ դէպքերը կարող են յանկարծ փոխվել այն ձեւով, որ իրանք եւրոպական պետութիւնները շահագրգռված կը զգան իրանց փոփոխութիւնները մտցնել եղած-անցածի մէջ:

Այդ հաշիւները օսմանեան քաղաքագէտների հին դպրոցի առանձնահատուկ արտօնութիւններն են: Նախկին ժամանակներում օսմանեան դիպլոմատիան օգտվել է այդպիսի հանգամանքներից և ժամանակաւոր աջողութիւններ ձեռք բերել իր համար:

Յուսահատութեան դրան հասած Թիւրքիայի համար դժուարէ է ամեն-մի քայլ, որ կարող է նոր յուսատեղեր բանալ: Եւ ահա վարկաբեկված Երիտասարդ-Թիւրքիան փորձում է մի նոր խաղ և օտարոտի նուաճումներ է կատարում սակարկութեան նպատակաւոր պայմաններ շահելու նպատակով:

Ա. Բալանթար

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

Մուշ, 26 յունիս

Շաբթուս ամենէն կարևոր նորութիւնն էր ընտուած քանի մը «վօնտրբանդ» վէնէր ընտուած Առաքել քերու պատճառով բանտարկուած Առաքել Սիմոնեանի և Ջորեան Մկրտիչի ազատումը: Առաջնորդ Ներսէս եպ. Խարախանեան ալ, որ սոյն խնդրով Վարդօ էր գացեր, վերադարձաւ և շէնըկցիներու պահանջքին վրայ՝ սակայնուհայտ իսկոյն երթալ Սասուն, շէնըկցոց և խուլբեցի քիւրդ աղաներու հողային դատը պաշտպանելու:

Այդ յոյժ կնճռոտ խնդրոյն ժամանակաւոր մեղմացում տալու մտօք՝ տեղւոյս միւթէսարիֆն ալ ստիպուեցաւ իր վարչական կազմով Սասուն երթալ: Շէնըկցիք վճարեցին 10 ոսկի կառավարութեան այդ անդամներուն որպէս ճամբու ծախս, դեռ որքան ալ պիտի ծախսեն՝ Աստուած գիտէ:

Շէնըկցիներու այդ ընդարձակ հողամասը գրաւուած է Խուլբ գաւառակի Թելօ-աղայի աղայ աշիրէթապետ Հիւսէյնի-աղայէն:

Թելօ-աղան եղեր է երկար տարիներ ի վեր Խուլբի կայմակամութեան բացարձակ տիրապետողը և իր այդ ազդեցիկ ու բարձր դիրքին շնորհիւ յաջողեր է ներելի և անհերելի միջոցներով գրաւել բազմաթիւ քիւրդ և հայ բայտներու գիւղեր: Թելօ-աղան Փասուրի և Ահարոնքի մէջ ունի պալատանման քանի մը քէօշկեր, զորս շինած է հայ գեղջուկին քրտնաթոր ու անվարձք և անճաշ աշխատանքով: Թելօ-աղայի համար կը պատմուի, որ խիստ անգութ վագր մը եղած է: Այնպէս կը պատմուի, որ իր քէօշկին վրայ աշխատող հայ բանուոր մը, անգամ մը, իր ամբողջ շաբթուան հացը բերած է և զայն պահելու համար կուզէ դնել ծոցն ու աշխատիլ, բայց դժբաղդաբար շապիկն իսկ չափազանց կտոր-կտոր եղած ըլլալուն՝ հացը ծոցէն վար կիյնայ մինչու: Թելօ-աղային քովը նստող մուսիւման մը կը խղճահարի հայուն այս թշուառութեան վրայ և կուզէ հացի կտորներն առնել ու մէկ կողմը պահել: Բայց Թելօ-աղան կարգիւէ, ըսելով որ՝ «հայուն արժանի վիճակն այդ է. երանի թէ բոլորն այդպէս ըլլային, որ մինք հանգիստ իշխէինք»:

Թելօ-աղան չկայ հիմա, բայց անոր որդի Հիւսէյն աղան հօրմէն տան անգամ աւելի հարստացած է այժմ և աւելի ուժեղցած ու ազդեցիկ դարձած է իբրև «համիդիէ ալայի» գնդապետ: Անոր եղբօրորդին և զաղան ազգականները՝ Կինճի միւթէսարը-ֆուլթեան մէջ հիմա կառավարական կարևոր պաշտօններ կը վարեն: Եւ շնորհիւ այդ հանգամանքի՝ Հիւսէյն-աղան իր հողային կալուածներու սահմանները քառապատկեր ու հնգապատկեր է գրաւելով հետզհետէ Կէլիէ - կըմանի, Կէլիէ - մանսուրի և Մերկէ-մոզանի ընդարձակ լեռնաճալները, հետզհետէ հալածելով ու փախցնելով այդ կողմերու դիմադրող հայերը, միայն խիստ ցանցառ թիւով պահելով այն հայերը, որոնք ընտելացեր են ճորտական օրէնքով ըստ ամենայնի հնազանդիլ իրեն:

Այս փառաւոր կապերու և ազդեցութեան շնորհիւ Հիւսէյն-աղան յաջողեր է թափու քօչանով Մերկէ-մոզանի և Սասունի Շէնըկ գիւղի մէջ տեղի «մարան», որ դարերէ ի վեր շէնըկցիներունն է եղեր, իր վրայ դարձնել: Շէնըկցիները քօչան չունին, որովհետև արդէն երկրի օրէնքով «մարա» ըսուած արօտավայրերը քօչան չեն ունենար: Իսկ Հիւսէյն-աղան աւելի ճարպիկ գտնուելով յաջողեր է առանց կառավարական նախկին արձանագրութիւններու այդ հողամասը «չայիր» անունով իր անուան արձանագրել տալ:

Կը հաւատան, որ Մուշի կառավարիչը 20 ոսկիով կաշառուելով Հիւսէյն-աղայէն՝ ուզեր է դատը վճռել յօգուտ վերջինիս: Առաջնորդին գործը եղեր է այն, որ հակառակելով կառավարչին և թիւրք բոլոր պաշտօնեաներուն՝ յորդորեր է գիւղացոց, որ չընդունին այդ սուտ վճիռը և դատարանի դիմեն: Այսպիսով գործը կիսկատար է մնացեր:

Սասունէն մեկնելէն երկու օր յետոյ, բարեբաղդաբար, կառավարչին պաշտօնանկութեան հեռագիրը կուգայ:

Ասոր վրայ հայերը քիչ մը սրտապնդուած՝ նոր դատավարութեան են դիմեր և նոյնիսկ ամբաստաներ են կնճռի «արագի քեսթիբին» (կալուածական քարտուղար), որ տարահոչակ Հիւսէյն-աղայի եղբօր տղան լինելով ապօրինի միջոցներով շէնըկցոց այդ հողը գաղանի քօչան բրած է Հիւսէյն-աղայի վրայ...

Շէնըկցիները երդում ըրեր են, որ իրենց արեան գնով պիտի պաշտպանեն իրենց այդ պապենական արդար հողը:

Թախիծ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԳԺՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
8 յուլիսի

Սոֆիա.—Թրակիայի նահանգապետը զեկուցանում է, որ Ուզուն-քէօփրիւի և Լիւլէ-Բուրգասի վրա արշաւող զօրքերը բաղկացած են քիւրդերից և հրամանատարն է Էնվէր-բէյը: Նրանց թւում կան նաև սերբեր:

Սոֆիա.—Արշաւող թիւրքական զօրքերի գործած գազանութիւններից սարսափահար քրիստոնեայ ազգաբնակութիւնը փախչում է Ադրիանուպոլիս:

Լոնդոն.—Սոֆիայից հեռագրում են, որ յուլիսի 7-ին թիւրքերը մտան Ադրիանուպոլիս բոլգարական փոքրիկ զօրամասի հետ կարճատև կռիւից յետոյ: Բաշիբոզուկների խմբերը հրդեհում են տները, կողոպտում, գազանութիւններ են գործում: Բումիլական զօրքերը առաջ են շարժվում, սպառնալով արևելեան գծին:

Սոֆիա.—Բոլգարական կառավարութիւնը համաձայնվել է անմիջական բանակցութիւն սկսել Սերբիայի, Յունաստանի ու Չերնոգորիայի հետ:

Թիւրք զօրքերը, արշաւելով Ադրիանուպոլսի վրա, Լիւլէ-Բուրգասին մոտիկ հրացանաձգութիւն և թնդանոթաձգութիւն սկսեցին երկաթուղին պահող բոլգարական զօրամասերի դէմ: Կառավարութիւնը բողոքեց օտարերկրեայ դեսպանութիւններին:

Բոլգարան պատգամաւորութիւնը զինադադարի և խաղաղութիւն կայացնելու նպատակով բանակցելու համար գնաց Նիշ:

Սալոնիկ.—Յունական գլխաւոր բանակից՝ Լիվունովից հաղորդում են, որ յունական դիվիզիան Պէչէվից գնում է դէպի հիւսիս:

Աթէնք.—Մեծ-բրիտանական դեսպանութեան ծովային կցորդ Բոյլը գնաց Կավալա՝ յունական նաւատորմի հետ միանալու նպատակով:

Աթէնք.—Աթէնական գործակալութիւնը արժանահաւատ տեղեկութիւնների հիման վրա հաղորդում է, որ բանակցութիւնները Թիւրքիայի հետ դիպլոմատիական յարաբերութիւնները վերականգնելու մասին աւարտված են արդէն: Համաձայնութեան նախագիծը ներկայացվում է մինիստրների խորհրդին: Համաձայնութիւնը կը ստորագրվի Աթէնքում:

Աթէնք.—Յոյները տիրեցին Միսաթի ամրոցի հովիտը և ապահովեցին առաջխաղացութեան ազատութիւնը:

Վիէննա. — «Զօնտնտաղ-Մօնտագ-Ցէյտունգը» հաղորդում է, որ Կիւստենդիլին մօտիկ բոլգարները վճռական ջարդ կրեցին, որից յետոյ Բոլգարիան վճռեց լիազօրներ ուղարկել Նիշ հաշտութեան բանակցութիւններ վարելու համար:

Բելգրադ.—Բոլգարական պատուիրակներ գեներալներ Պապրիկովը, Իվանչէվը և Կ. Պոլսի նախկին զինուորական կցորդ Տէպալշիկովը, նոյնպէս Սոֆիայի ռուսական զինուորական կցորդ Բոմանովսկին աւտոմոբիլով եկան սերբոբոլգարական սահմանագիծի վրա գտնվող Պիրոտ քաղաքը և ապա արտակարգ գնացքով ուղևորվեցին Նիշ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՄԵՐՁԱՒՈՐ ԱՐԵՒԵԼԵՔԻ ԴԵՊՔԵՐԸ

(ԼՐԱԲԵՐԻ ՄԷ ՅՈՒՇԱՏԵՍԸՐԸ)

—o—

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

III

Կ. Պոլիս, 26 յունիս

Անմէջ Աղայէվ անցեալ օր ամենայն անպատասխանութեամբ գրած էր, թէ եթէ կառավարութիւնը միաքը դնէ բարենորոգումներ չգործադրելու, կրնայ նոյնիսկ կօնտրօլը ընդունելէն յետոյ չգործադրել, վասնզի բարենորոգմանց անգործադրելի մնալու պարագային առ առաւելն միայն պիտի տեղեկագրեն իրենց կառավարութեան, որ ոչինչ պիտի ընէ, քանի որ չկայ պետութիւն մը, որ «հայոց սև աչքին համար» պատերազմ ընէ Թիւրքիոյ հետ:

Այս լրջենի գրութիւնը ցոյց կուտայ, թէ ինչ ոգի կը տիրէ Թիւրքերու մէջ, որոնք կուզեն սեէ կերպով մը ազատել ինքզինքնին եւրոպական կօնտրօլէ և պահել իրենց գործելու ազատութիւնը Անատօլուի մէջ:

Ասոր համար ամեն միջոցի կը դիմեն, և ամեն փաստ իրենց համար ընդունելի է:

Ասոր համար աշխարհը իրար կանցնեն, սակայն չեմ գիտեր թէ որքան օգուտ պիտի ունենայ: Այսպէս՝ «Թանին» անցեալ օր կը յիշեցնէր խոստումներ, որոնք իբր թէ Եւրոպա ըրած է, և սա անհեթեթ խօսքերը կը գրէ:

«Իրերու այս վիճակին հանդէպ անիրաւ ու անժամանակ բան է, ուրեմն, տեսնել որ դեսպանները արևելեան նահանգներուն մասին կը խօսին: Երբ մեծ տէրութիւնները հաշտութիւն կնքել տուին, խօսեցան Սպիտակ-Թիւրքիոյ մէջ մեր հեղինակութեան և մեր անվախութեան պահպանման վրայ: Արդ, Արևելեան Անատօլուի խնդիրը յարուցանելով, անոնք բացարձակ հակասութեան մէջ կը գտնուին իրենց խոստումներուն և իրենց յանձնառութիւններուն հետ: Ինչու համար բանաւոր կերպով չեն շարժիր: Ինչու համար ծանրացուցիչ պարագաներ կը համարին, փոխանակ մեղմացուցիչ պարագաներ նկատելու, այն բոլոր աղէտները, որոնք խուժեցին մեր վրայ: Այսպէս է որ կօգնեն ինկող պետութեան մը: Միջազգային անարդարութիւն ու ճնշումը սահման պիտի չունենա՞ն արդեօք»:

Այս ջղագրգռութեան մէջ պարիւրքարանի բողոքի աղաղակը թշնամական կը նկատուի Բ. Դրան շրջանակներուն մէջ և կը համարուի պարիւրքարանի կողմէ պրովոկացիա և թիւրքաբնակ եւրոպական կօնտրոլը իրագործելու համար:

Այսպէս՝ անցեալ օր պարիւրքարանը կը յանդիմանուէր յատուկ գիրով մը, թէ «ժողովուրդին անդորրութեան, ապահովութեան եւ հանգստութեան պահպանման համար կառավարութեան կողմէ լուրջ միջոցներ ձեռք առնուած ըլլալը պատրիարքարանին յայտնի ըլլալով հանդերձ, կը շարունակէք թշնամական յերիւրանքներու եւ լուրերու կարեւորութիւն տալ, մինչդեռ ձեզմէ հակառակը կը պահանջուէր եւ կը սպասուէր»:

Ասիկա իբր թէ բաւական չըլլար, նոր գիր մըն ալ ուղղուած է պարիւրքարան, որով կը պահանջուի Մուշի և Սղերդի առաջնորդներուն պաշտօնանկութիւնը, իբր գրգռիչ և ազմկայարոյց և Բաղէշի առաջնորդին ալ յանդիմանուելը կը պահանջուի:

Այս կերպով կը յուսայ կառավարութիւնը լռեցնել հայերը և անոնց բողոքները դադրեցնել, կարծելով թէ՝ եթէ հայերը բողոքելէ դադրին, Եւրոպա միջամտելէ կը դադրի, մինչդեռ իրողութիւնը սա է, որ Եւրոպա իր իսկ շահուն համար է, որ կօնտրոլով երաշխաւորուած բարենորոգումներ կը պահանջէ:

Հետևաբար Բ. Դրան բոլոր ջանքերը անդօր են եւրոպական համաձայնութեան որոշումներուն դէմ ըմբոստանալու, եթէ սակայն անոնք համաձայնութեամբ շարժին և կօնտրոլը անպատճառ դնելու որոշում տան:

Եւ արդէն Բ. Դրան բոլոր հաւատիքներուն կարեւորութիւն չարուելը անով կապացուցուի, որ հակառակ անոր, որ Հայաստանի բարենորոգմանց համար Բ. Դրան կազմած ծրագիրը դեսպաններու անպաշտօն կերպով (!!!) հաղորդուած էր, իրենց ձեռնարկին հաղորդուած ըլլալը ցոյց տալու համար, դեսպանները կը շարունակեն իրենց գործը և կազմեցին յանձնաժողով մը, իւրաքանչիւր դեսպանատան ուսումնական պաշտօնատարներէն Հայաստանի բարենորոգմանց մասին ծրագիր մը կազմելու համար:

Այդ յանձնաժողովին կանդամակցին Անգլիոյ դեսպանատունէն առաջին թարգման Ֆիցմորիս, Ֆրանսայի դեսպանատունէն՝ քարտուղար Դը Սէն-Կուէնթէն, Գերմանիոյ դեսպանատունէն՝ թարգման գօկտ. Շէօնբէրգ, Ռուսիոյ դեսպանատունէն՝ թարգման գօկտ. Մանդելստամ, Աւստրօ-Հունգարիոյ դեսպանատունէն՝ առևտրական գործոց անօրէն Պանֆիլի, Իտալիոյ դեսպանատունէն՝ երկրորդ թարգման առպետ Ա. Շարէս:

Այս յանձնաժողովը իր նիստերը կը շարունակէ կանոնաւորապէս և կը քննէ սակէ առաջ կազմուած բոլոր ծրագիրները: Իր եզրակացութիւնը պիտի հաղորդէ Կ. Պոլսոյ դեսպաններու ժողովին, որ իր կարգին պիտի քննէ կազմուած ծրագիրը: Վերջնական ծրագիրը Բ. Դրան պիտի ներկայացուի հաւաքական ծանուցագրով մը: Այս իրերադարձութեանց տեղեակ կառավարութիւնը հիմա ամեն բան կընէ՝ այս ծրագիրը վիժեցնելու համար:

Թալէաթ-բէյ սկսած է իր համոզիչ լեզուն բանալ և կուզէ, որ «մենք մեր մէջը անանկ բան մը ընենք, որ Եւրոպա չմիջամտէ»: Անանկ խաբէական ծրագիրներու, ընական է թէ, հայերը իրենց փորձառութեամբ չեն կրնար հաւատք ընծայել. սակայն մենք միշտ երկիւղ ունինք, որ Թիւրք կառավարութիւնը պիտի յաջողի Եւրոպան խաբել և անոր հաւատացնել, թէ ինքը կրնայ բարենորոգումներ գործադրել:

Հայրդի

ՄՇԱԿ

Խմբագիր՝ Գրիգոր Արծրունի

Գրական գործակցներ՝ Գ. Զարեհ, Գ. Սիրվարդ, Գ. Տարոն, Գ. Ալիշան, Գ. Գարեգին Եպիսկոպոս Սրվանձտեանց, Գ. Գարեգին Եպիսկոպոս Հովսեփեան, Գ. Գարեգին Եպիսկոպոս Տէր-Մովսիսեան, Գ. Գարեգին Եպիսկոպոս Զարբհանալեան, Գ. Գարեգին Եպիսկոպոս Խաչատուրեան, Գ. Գարեգին Եպիսկոպոս Յովսեփեան, Գ. Գարեգին Եպիսկոպոս Տէր-Գրիգորեան, Գ. Գարեգին Եպիսկոպոս Ալամդարեան, Գ. Գարեգին Եպիսկոպոս Ալիշանեան, Գ. Գարեգին Եպիսկոպոս Գրիգորեան, Գ. Գարեգին Եպիսկոպոս Գրիգորեան, Գ. Գարեգին Եպիսկոպոս Գրիգոր

ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԱՋ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

8 յուլիսի

Կ. Պոլիս.—Երեք միարօպոլիաներից բաղկացած պատուիրակութիւնը յունաց պատրիարքի անունից մեծ վէզիրին և մինիստր Թալէաթ-բէյին գանգատ ներկայացրեց բուլգարներից մաքրած Բօգոստո, Մալգարա և Միրիօֆիտո քաղաքներում քրիստոնեաների վերաբերմամբ գործադրված գազանութիւնների դէմ։ Պատրիարքի կողմից Բօգոստո ուղարկված յանձնաժողովը հաստատում է հայ ազգաբնակութեան վերաբերմամբ կատարված գազանութիւնները։ Թիւրք զօրքերը Սամի-բէյի հրամանատարութեամբ կողոպտում են յոյն և հայ ազգաբնակութիւնը, կոտորում են դիմադրողներին, հրդեհում տները։

Մինիստրների խորհրդի նիստում մեծ պետութիւնների շրջաբերական յայտագրի քննութեան ժամանակ կարծիքները բաժանվեցին. մեծ վէզիրը, Թալէաթ-բէյը և մի քանի ուրիշ մինիստրներ պահանջում էին պատերազմ յայտարարել Բուլգարիային, ընդհանուրակ Օսման-Նիզամի-փաշան, Խաբիդէն, Օսման-Էֆէնդին դէմ էին։ Զաթալջայից կանչված Իզզէթ-փաշան և շտաբի պետ Պերտեֆ-փաշան յայտնեցին, որ զօրաբանակը բոլորովին պատրաստ է Բուլգարիա արշաւելու։

—

Կ. Պոլիս.—Օսմանեան գործակալութիւնը հրատարակել է Բ. Դրան շրջաբերական յայտագրի ընագիրը ուղղված մեծ պետութիւններին։ Այդ յայտագրում յիշատակվում է, որովհետև Բուլգարիան հրաժարվեց մաքրել այն շրջանը, որը պէտք էր վերադարձնել Թիւրքիային, ուստի օսմանեան կառավարութիւնը պահանջում է սահմանագիծը անցկացնել Էնօսից հիւսիս Մարիցայի հոսանքով։ Թիւրքիան կը կամենար կարգաւորել այդ հարցը Բուլգարիայի հետ միասին դիպլոմատիական ճանապարհով, բայց բուլգարների կատարած գազանութիւնները հարկադրում են Թիւրքիային դրաւել Թրաքիան Մարիցայի հոսանքով մինչև Ադրիանուպոլիս։ Թիւրքիան պարտաւորվում է պետութիւնների համաձայնութեամբ լուծել Թրաքիայի ապագայի հարցը և պատերազմը վերսկսելու ամբողջ պատասխանատուութիւնը թողնում է Բուլգարիայի վրա։

—

ԱԹԷՆՔ.—Յուլիսի 8-ից ոչ ուշ Յունաստանը, Սերբիան և Չերնոգորիան կը պատասխանեն Ռուսաստանի առաջարկին պատերազմական գործողութիւնները դադարեցնելու մասին։ Երեք դաշնակից կառավարութիւնները պատրաստ են անմիջական բանակցութեան մէջ մտնել Բուլգարիայի հետ հաշտութիւն կայացնելու համար. միաժամանակ նախնական խաղաղութեան դաշինքը ստորագրելիս տեղի կունենայ և զինադադարը։

—

Պետերբուրգ. (Պաշտօնական).—Արտասահմանեան մամուլի մի քանիսում Ռուսաստանի գործելակերպը բալկանեան կրիզիսում սիալ մեկնութեան և լուսաբանութեան է ենթարկվում։ Ա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻՆԻՍՏՐԱԿԱՆ ՕՐԻՆԱԶԱՆՑՈՒԹԻՒՆ ԱՆԳԼԻԱՑՈՒՄ

(Մարքօնիի գործը)

—

Անգլիական ներկայ մինիստրական կազմի երեք անդամների օրինազանցութեան հարցն է այս, որ «Մարքօնիի գործը» անուան տակ մեծ խլրտում առաջ բերից նորերս ոչ միայն ամբողջ Անգլիայում, այլ և հանուր հետաքրքրվող աշխարհում և, որպէս մի խոշոր քաղաքական սկանդալ, դրդեց անգլիական պարլամենտի առաջ։ Անգլիայի պանպանողական տարրերը մի քիչ չափազանցութեան դիմելով՝ այդ գործին նոյնիսկ «Անգլիական Պանամա» մականունը կպցրին, համեմատելով նրան Պանամայի յայտնի խնդրի հետ։

Ամենուրեք քաղաքական տապարէզներում և կառավարական-մինիստրական շրջաններում սակաւ չեն տեղի ունենում նման սկանդալներ, որոնք շատ անգամ քաղաքական և պետական յուզումների պատճառ են դառնում, կենտրոնացնելով իրանց վրա ընդհանուրի ուշադրութիւնը։

Ներկայ գործը մի քանի տարվայ պատմութիւն ունի։ Խնդիրը պարզ կացուցանելու համար մենք ստիպված ենք համառօտակի յիշել այդ պատմութիւնը։

1909 թ. ներկայ անգլիական մինիստր Ռիֆիւս Իսահակի եղբայր՝ Գօդֆրէյ Իսահակը ձեռք է բերում տեխնիկական նորագոյն ձեռնարկութիւններ կատարող անգլիական յայտնի Մարքօնի ընկերութեան դիրեկտորութեան պաշտօնը։ Երկար բանակցութիւններից յետոյ Գօդֆրէյ Իսահակին աջողվում է կառավարական պօստերի մինիստր սր Սամուէլի հետ մի նշանաւոր պայմանագիր կազմել, որի համաձայն Մարքօնի ընկերութիւնն արտօնութիւն է ստանում Մեծ Բրիտանիայի մի շարք կէտերում անթել հեռագրի կայաններ հիմնել։

Առանց այդ պայմանագիրը պարլամենտին ներկայացնելու ի վաւերացումն, որով և նրա արժէքը մնում է ժամանակաւոր, Գօդֆրէյ Իսահակը շտապով մեկնում է Ամերիկա, որպէս զի այնտեղ վերականգնէ Մարքօնի ընկերութեան ամերիկեան մասնաճիւղը, որի գործերն այնքան էլ փայլուն չէին ընթանում։ Հիմնվելով անթել հեռագրի կայանների արտօնութեան վրա, Գօդֆրէյ Իսահակ ընկ. ամերիկեան մասնաճիւղին իրաւունք է տալիս 7 միլիոն դոլարի արժէքով թղթեր բաց թողնել։ Ի պատիւ մասնաճիւղի վերակազմութեան տեղի է ունենում մի հսկայական բանկէտ, որից յետոյ Գօդֆրէյ Իսահակ այդ արժէթղթերից 500,000 հատ հետն առած՝ վերադառնում է Անգլիա և նրանցից 100,000 հատ պահելով իր և իւրայինների համար՝ 400,000 հատը վաճառքի է հանում։ Սակայն նրա եղբայրը՝ մինիստր Ռիֆիւս Իսահակը չէ ընդունում արժէթղթերը, առարկելով որ մի կողմից մեծ ռիսկ կը լինէր գնել այդքան քանակով, միւս կողմից՝ կառավարութեան ոչ մի անդամը, ըստ պատուոյ օրէնդրքի, չը պիտի մասնակցի մի ընկերութեան, որ կնտրակտներ է կատարում պետութեան հետ։

Վերջ է հանում «Տիմանիկի» տրագիրի խորտակումը (1912 թ. ապրիլի 15)։ Ամեն կողմից, աշխարհի բոլոր ծայրերից կսկծի ու սարսափի ճիչերի հետ լսվում են նաև բողոքներ անթել հեռագրի կայանների անբաւարար թուի դէմ։ Պահանջ է առաջանում կրկնապատկել, քառապատկել այդ կայանների թիւը, և «Տիմանիկի» խորտակումը, մարդկութեան համար ընդհանուր այդ հրաշալի աղէտը, Մարքօնի ընկերութեան համար հարուստ գանձի աղբիւր է դառնում։ Անմիջապէս ընկերութեան վարկը բարձրանում է և նրա արժէթղթերը, դեռ բօրսային չը ներկայացված ու գները չը նշանակված, սկսում են ձեռքից-ձեռք խլվել։

Բօրսային խաղերը մոռացնել են տալիս մինիստր Ռիֆիւս Իսահակին իր նախկին մտածելակերպն ու որոշումը. հազարների բօպէական շահը այնպէս է յափշտակում նրան, որ նա, մոռացած և՛ թիղմ, և՛ օրէնք, և՛ պաշտօն, ենթարկվում է մամոնայի հրապոյրին ու հաւը 2 լիվրով 6000 արժէթուղթ է գնում իր երկրորդ եղբայր Հ. Իսահակից։ Նոյն օրը նա իր կատարած աքանչելի սպեկուլացիայի մասին խօսում է մինիստրներ Լլոյդ Ջօրջին և Միսէր օֆ-Էլիբանկին և Ջերմ խորհուրդ է տալիս իր պաշտօնակիցներին օգտվել սքանչելի առիթից ու ձեռքից բաց չը թողնել դիւրութեամբ մեծ գումար շահելու հնարաւորութիւնը։ Վերջինները միջոցների տէր լինելով Ռիֆիւս Իսահակից հաւը 2 լիվրով 1000-ական արժէթուղթ են գնում յետոյ վաճառելու պայմանով, ապահով լինելով որ արժէթղթերը շուտով բարձրանալու են և բարձր գնով ծախվելու։

Մի քանի օրից Մարքօնիի արժէթղթերի գները որոշվում են բօրսայում, որից անմիջապէս յետոյ իրօք նրանց արժէքը 2-ից բարձրանում է 3 լիվրի։ Երեք մինիստրները—Ռիֆիւս Իսահակ, Լլոյդ Ջօրջ և միստէր օֆ-Էլիբանկ—Գօդֆրէյ Իսահակի խորհրդով սկսում են վաճառել իրանց արժէթղթերը և կարճ միջոցում 115,000 ֆրանկ զուտ օգուտ են ստանում։ Իսկ ինքը Գօդֆրէյ Իսահակը նոյն ժամանակամիջոցում մեծ գումարներ է վաստակում և առանց այդ էլ մեծ միջոցների տէր լինելով՝ այդ նոր վաստակն ամբողջովին նուիրում է Մարքօնի ընկերութեանը, որի նախագահն ինքն է։

Մինիստր Ռիֆիւս Իսահակն այսուհանդերձ փորձված ու հեռատես մարդ լինելով՝ Անգլիան կողմերից պանպալիստական կլուբները փոքրիկ հեռագիրներ էին տեղում շարունակ Սոֆիա ու Բէլգրադ, թախանձագին խնդրելով վերջ տալ «եղբայրական» գժտութիւններին, ամօթ է. «աղատագրութեան» մեծ գործը արատաւորվում է, պանսլաւոնականութեան պտուղը ընկնում։ Իսկ ռուսական կադետիզմի կոչված պարապլուխը՝ Միլիւկովը որքան մակերեսային է եղել՝ իր ընդարձակ յօդուածների և դասախօսութիւնների մէջ՝ բալկանեան պատերազմի, որպէս երևոյթի, ընոյթը որոշելիս, նոյնքան մխոտիտ է նա ներկայացրել, երբ յորդորում է նա և յոյսեր տածում, որ Մակեդոնիային աւտօնոմիա տրվի դաշնակիցներից ազատակամօրէն։

Բալկանեան մանր պետութիւնների երեկվայ «եղբայրութիւնը» նոյնքան պայմանական էր, որքան նրանց այսօրվայ լարված սահմանագլխային ընդհարումներով ուղեկցվող և պատերազմ սպառնացող թշնամութիւնը։ Երկու դէպքումն էլ իրողութիւններ են դրանք, որոնք իրանց առաջնորդման ըէալ հիմքերն ու ազդակները ունէին։ Պատերազմի սկզբում անհրաժեշտ էին դաշնակիցներին «ցեղային պատուի», պանսլաւոնական «եղբայրութեան» և ուղղափառ դասանքի թնդացող գաղափարները՝ իրանց դիւթական ոյժով—կարճ՝ պանսլաւիստական ուսուցիչ Ֆրազէօլօգիայի փրփրագէզ ալիքները—որպէսզի կարելի լինէր մասնգնդեր մասակարարող բանակներին բոցաւառել, պատերազմի ձեռնարկը դարձնել համաժողովրդական փառապանծ ուզուրութիւնների առարկայ, որպէս զի կարելի լինէր խօսքի ու գործի օգնութիւն ստանալ դրսի աշխարհից, ապահովել բարոյական և ֆինանսական կրեդիտը և այլն և այլն։ Ուրեմն համասլաւոնական և կրօնական գաղափարներն ու զգացմունքները ոչ թէ եղել են պատճառ ու հիմք պատերազմի՝ որպէս երևոյթի՝ ծագման, այլ նրանք շահագործվել են որպէս խաբուսիկ միջոցներ, որպէս խսկական մոտիվները քօղարկող վերնազգեստ՝ անգէտ ու անգիտակից հանրութիւնը մոլորեցնելու, իրանց ինչքն ու արիւնը խեղդող ագրեսիւութեամբ զոհաբերելու համար։ Պանսլաւիզմը նոյնքան անզօր է որևէ ազգային, ցեղային կամ հասարակական երևոյթի ծագման հիմքը կազմելու, որքան պանիսլամիզմը Թիւրքիայում կամ Կովկասում (իսմայիլ-Թուրքական ընդհարումները) և կամ պանգերմանիզմը Եւրօպայում։ Ամենուրեք աւրող դասակարգերի պատնեշաւոր իդէօլօգները, սոցիալական մամուլը՝ իր սերվիլիստ ժուրնալիստներով, խաղում են մասսայի անկիրթ հոգու գեհենիկ ինստինկտների հետ, նրա սրտի անտաշ լարերի վրա, երբ հարկը պահանջում է տիրող դասակարգերի շահերից ելնող որևէ նպատակ՝ հանժողովրդական և համազգային օվացիաներով յաղթութեան պսակով զարդարել։ Ամբոխը՝ Եւրօպայում թէ Ասիայում՝ իր հոգեկան շատ հիմնական մղումներով նոյնն է տակաւին տարաբաղդաբար, ուստի նոյն մեթոդներով են խաղում նրա հետ և գործիք ծառայեցնում նրան կարևորագոյն դէպքերում վերին հեղինակութիւնները ամենուրեք՝ քաղաքակրթութեան հին թէ նոր որբանոցում։

Բալկանների հուրբաբասական և դաւանական ֆրազէօլօգիան, սակայն, կը մնար նոյնութեամբ, թէև արտայայտութեան տարբեր եղանակներով, նաև պատերազմից յետոյ, եթէ միայն վերջինս կատարեալ պարտութեամբ կնքվէր ընդդէմ բալկանեան դաշնակիցների և ոչ կատարեալ յաղթութեամբ յօգուտ նրանց։ Օգնութեան կարիքը, տխուր, դառն ու ծանր կացութիւնը միացրած, ամուր համախմբած կը պահէր նման վիճակագիցներին ընդհանուր թշնամու դէմ։

Կատարելապէս այլ բան է, երբ դաշնակիցները յաղթութեամբ են պակել իրանց ընդհանուր ձեռնարկը. «եղբայր» եղել են նրանք մինչև այն սահմանը, երբ հարկաւոր էր տարալել տիրանին և թեկադրել նրան հաշտութեան պայմաններ, այսինքն մինչև դաշնակիցների հաշիւների անմերների սարտումը թշնամու հետ։ Դրանից յետոյ արդէն պանսլաւիստական ոչ մի կախարդիչ միջոց չէր կարող «եղբայրական» հաւասարակշռութեան նժարը պահպանել դաշնակիցների միջև, որոնցից ամեն մէկը ունեցել է իրայատուկ ըէալ մոտիվներ՝ թիւրք կառավարութեան պատերազմ յայտարարելու համար։ Սակայն այդ մոտիվներն են, որոնք այսօր ամենայն յստակութեամբ հրապարակ նետվելով՝ անխնայօրէն շեղջակոյտ նետեցին այլ ևս աւելորդ պանսլաւիստական իդէաները, որպէս միայն կարիքի դէպքում յիմարներին ու անգիտակիցներին մոլորեցնելու համար պիտանի գործիք։

B. Intimus

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

8 յուլիսի

Պետերբուրգ.—Պարսկական խնամակալի Պետերբուրգում եղած միջոցին հարց է յարուցվել երիտասարդ շահին թագադրելու մասին։ Թագադրութիւնը տեղի կունենայ 1914 թ. օգոստոսին, երբ շահը 18 տարեկան կը լինի։ Մինչև թագադրութիւնը շահը մասնակցութիւն կունենայ մինիստրների խորհրդի նիստերին և հետզհետէ կը ծանօթանայ պետական գործերի ընթացքի ու դրութեան հետ։

—

Հոմ.—Բավէնայի մօտիկ իր վիլլայում կալանաւորված է զինուորական մինիստրութեան բաժանմունքներից մէկի վարիչ կոմս Մօրիցցօ-դէ-Բօկկօն, որ մեղադրվում է կարևոր փաստաթղթեր աւստրիական կառավարութեանը տալուն համար։ Կոմսի հետ միաժամանակ կալանաւորված է աւստրիական բարձր շրջանի պատկանող մի տիկին։

—

Լիսսաբօն.—Քաղաքի կենտրոնում պղնձագործի արհեստանոցում պայթել է մի արկղ, մէջը թագցրած ռումբերով։ Ծանր վիրաւորված է արհեստանոցի տէրը։ Ոստիկանութիւնը կալանաւորել է արհեստանոցի ծառայողներին։ Քաղաքի միւս մասերում ևս ռումբեր են գտնվել։

—

Թէհրան.—Երբ Սալար-ուդ-Դովլէին կալանաւորեցին ու բերան կօզակների բանակատեղին, կօզակների թուցիկ խումբը բռնեց նամակաբեր սուրհանդակին։ Այդ նամակով Քիրմանշահի գլխաւոր ցեղերը խոստանում էին Սալար-ուդ-Դովլէին շուտափոյթ օգնութիւն հասցնել։ Կառավարութիւնը գոհ մնալով կօզակների բրիգադայի արշաւանքի գործունէութիւնից՝ որոշել է պարգևատրել նրան մասնակցողներին։

—

Շանխայ.—Շանխայի զինանոցը անձնատուր եղաւ։ Հարաւային զօրքերը գրաւել են բոլոր երկաթուղիները, բայց շարունակում են բանակցել հաշտութիւն կայացնելու մասին։ Ապստամբները գրաւել են չինական թաղը և հեռագրատունը, սակայն այնտեղից դուրս քշվեցին, երբ օգնական զօրքեր եկան հիւսիսից։ Ապստամբները նոր փորձ արին ներս խուժելու չինական թաղը, բայց յետ մղվեցին։ Միւս կողմից պանսլաւիստական ոչ մի կախարդիչ միջոց չէր կարող «եղբայրական» հաւասարակշռութեան նժարը պահպանել դաշնակիցների միջև, որոնցից ամեն մէկը ունեցել է իրայատուկ ըէալ մոտիվներ՝ թիւրք կառավարութեան պատերազմ յայտարարելու համար։ Սակայն այդ մոտիվներն են, որոնք այսօր ամենայն յստակութեամբ հրապարակ նետվելով՝ անխնայօրէն շեղջակոյտ նետեցին այլ ևս աւելորդ պանսլաւիստական իդէաները, որպէս միայն կարիքի դէպքում յիմարներին ու անգիտակիցներին մոլորեցնելու համար պիտանի գործիք։

B. Intimus

—

Տոկա.—Նիկոլայի գիւղի իր կալուածքում վախճանվեց Զեմուլպօյի հերոս «Վարեագ» յածանաւի հրամանատար Բուրնեվը։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀՈՐԻԶՈՆԷՆ

—

Գպրոցական արձակուրդի հանդէսներ

Վան, 19 յունիս

Վասպուրականի գպրոցական տարեշրջանի քննութիւնները արդէն սկսած լինելով՝ աւելորդ չենք համարիր քանի մը հակիրճ տեղեկութիւններ տալ այդ առթիւ կատարուած հանդէսներու մասին «Մշակի» ընթերցողներուն։

Ամսոյս 12-ին Սանդիտեան օրիորդաց վարժարանը տուաւ փոքրիկ հանդէս մը ժամը 8½-ի մօտերը (ը. թ.) դպրոցին դրան առջև, ուր մանկական քանի մը արտասանութիւններէ, երգերէ ու խաղերէ յետոյ՝ դպրոցին տեսուչը մէկ-երկու խօսքով ներկայացուց դպրոցին վիճակն ու նպատակը։ Նկատի կայ եկող տարեշրջանին աւելի ևս ընդարձակել դպրոցին ծրագիրը, եթէ ծնողներու հետաքրքրութիւնը ոգեւորէ դպրոցին վարչութիւնը։

Ներկայ հանդիսականները բոլորն ալ կիներ էին, այն ալ մեծ մասամբ ծնողներ։ Ի հարկէ ուրախալի երևոյթ մըն է տեսչին ըսածները, եթէ իրականան կանքի մէջ։

Ամերիկեան աղջկանց վարժարանի ընթացաւարտներու հանդէսն ալ կատարուեցաւ այս ամսոյ 13-ին միևնոյն շրջանակին պատկանող եկեղեցւոյ մէջ պատկառելի բազմութեան մը ներկայութեամբ. ընդամենը վեց շրջանաւարտները ստացան իրենց վկայագիրները։

Միևնոյն վարժարանի մանչ ընթաւարտներու հանդէսն ևս կատարուեցաւ դարձեալ նոյն շէնքին մէջ հետեւեալ օրը, ամսոյս 14-ին։ Ներկայ էին թիւրք քանի մը պաշտօնեաներ ու երկսեռ բազմութիւն մը։ Երգուեցան քառաձայն երգեր ու մէջ ընդ մէջ կարդացուեցան քանի մը շրջանաւարտներու գրութիւնները. ապա դպրոցին տեսուչը մի քանի ուրուագծերով բնորոշեց ներկան, յուսադրելով որ ապագան ալ լաւ կը լինի, քանի որ եկող տարի ևս յոյս կայ կօլէժ մը պատրաստելու, որու մէջ պիտի դասախօսեն կարող ուսուցիչներ ու պրոֆէսօրներ յատուկ մանրադիտական ճիւղերու վրայ։

Վկայականաց բաշխման միջոցին շրջանաւարտներէն երկու յառաջադէմ աշակերտներուն տրուեցան մրցանակներ, ու ժողովուրդը ոգեորեց զանոնց իր ծափերով։

Ա. Բէնդուս

—

Գրաբարեան արձակուրդի հանդէսներ

Վան, 19 յունիս

Վասպուրականի դպրոցական տարեշրջանի քննութիւնները արդէն սկսած լինելով՝ աւելորդ չենք համարիր քանի մը հակիրճ տեղեկութիւններ տալ այդ առթիւ կատարուած հանդէսներու մասին «Մշակի» ընթերցողներուն։

Ամսոյս 12-ին Սանդիտեան օրիորդաց վարժարանը տուաւ փոքրիկ հանդէս մը ժամը 8½-ի մօտերը (ը. թ.) դպրոցին դրան առջև, ուր մանկական քանի մը արտասանութիւններէ, երգերէ ու խաղերէ յետոյ՝ դպրոցին տեսուչը մէկ-երկու խօսքով ներկայացուց դպրոցին վիճակն ու նպատակը։ Նկատի կայ եկող տարեշրջանին աւելի ևս ընդարձակել դպրոցին ծրագիրը, եթէ ծնողներու հետաքրքրութիւնը ոգեորէ դպրոցին վարչութիւնը։

Ներկայ հանդիսականները բոլորն ալ կիներ էին, այն ալ մեծ մասամբ ծնողներ։ Ի հարկէ ուրախալի երևոյթ մըն է տեսչին ըսածները, եթէ իրականան կանքի մէջ։

Ամերիկեան աղջկանց վարժարանի ընթացաւարտներու հանդէսն ալ կատարուեցաւ այս ամսոյ 13-ին միևնոյն շրջանակին պատկանող եկեղեցւոյ մէջ պատկառելի բազմութեան մը ներկայութեամբ. ընդամենը վեց շրջանաւարտները ստացան իրենց վկայագիրները։

Միևնոյն վարժարանի մանչ ընթաւարտներու հանդէսն ևս կատարուեցաւ դարձեալ նոյն շէնքին մէջ հետեւեալ օրը, ամսոյս 14-ին։ Ներկայ էին թիւրք քանի մը պաշտօնեաներ ու երկսեռ բազմութիւն մը։ Երգուեցան քառաձայն երգեր ու մէջ ընդ մէջ կարդացուեցան քանի մը շրջանաւարտներու գրութիւնները. ապա դպրոցին տեսուչը մի քանի ուրուագծերով բնորոշեց ներկան, յուսադրելով որ ապագան ալ լաւ կը լինի, քանի որ եկող տարի ևս յոյս կայ կօլէժ մը պատրաստելու, որու մէջ պիտի դասախօսեն կարող ուսուցիչներ ու պրոֆէսօրներ յատուկ մանրադիտական ճիւղերու վրայ։

Վկայականաց բաշխման միջոցին շրջանաւարտներէն երկու յառաջադէմ աշակերտներուն տրուեցան մրցանակներ, ու ժողովուրդը ոգեորեց զանոնց իր ծափերով։

Ա. Բէնդուս

—

Ծովա.—Նիկոլայի գիւղի իր կալուածքում վախճանվեց Զեմուլպօյի հերոս «Վարեագ» յածանաւի հրամանատար Բուրնեվը։

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՀՈՐԻԶՈՆԷՆ

—

Գպրոցական արձակուրդի հանդէսներ

Վան, 19 յունիս

Վասպուրականի գպրոցական տարեշրջանի քննութիւնները արդէն սկսած լինելով՝ աւելորդ չենք համարիր քանի մը հակիրճ տեղեկութիւններ տալ այդ առթիւ կատարուած հանդէսներու մասին «Մշակի» ընթերցողներուն։

Ամսոյս 12-ին Սանդիտեան օրիորդաց վարժարանը տուաւ փոքրիկ հանդէս մը ժամը 8½-ի մօտերը (ը. թ.) դպրոցին դրան առջև, ուր մանկական քանի մը արտասանութիւններէ, երգերէ ու խաղերէ յետոյ՝ դպրոցին տեսուչը մէկ-երկու խօսքով ներկայացուց դպրոցին վիճակն ու նպատակը։ Նկատի կայ եկող տարեշրջանին աւելի ևս ընդարձակել դպրոցին ծրագիրը, եթէ ծնողներու հետաքրքրութիւնը ոգեորէ դպրոցին վարչութիւնը։

Ներկայ հանդիսականները բոլորն ալ կիներ էին, այն ալ մեծ մասամբ ծնողներ։ Ի հարկէ ուրախալի երևոյթ մըն է տեսչին ըսածները, եթէ իրականան կանքի մէջ։

Ամերիկեան աղջկանց վարժարանի ընթացաւարտներու հանդէսն ալ կատարուեցաւ այս ամսոյ 13-ին միևնոյն շրջանակին պատկանող եկեղեցւոյ մէջ պատկառելի բազմութեան մը ներկայութեամբ. ընդամենը վեց շրջանաւարտները ստացան իրենց վկայագիրները։

Միևնոյն վարժարանի մանչ ընթաւարտներու հանդէսն ևս կատարուեցաւ դարձեալ նոյն շէնքին մէջ հետեւեալ օրը, ամսոյս 14-ին։ Ներկայ էին թիւրք քանի մը պաշտօնեաներ ու երկսեռ բազմութիւն մը։ Երգուեցան քառաձայն երգեր ու մէջ ընդ մէջ կարդացուեցան քանի մը շրջանաւարտներու գրութիւնները. ապա դպրոցին տեսուչը մի քանի ուրուագծերով բնորոշեց ներկան, յուսադրելով որ ապագան ալ լաւ կը լինի, քանի որ եկող տարի ևս յոյս կայ կօլէժ մը պատրաստելու, որու մէջ պիտի դասախօսեն կարող ուսուցիչներ ու պրոֆէսօրներ յատուկ մանրադիտական ճիւղերու վրայ։

Վկայականաց բաշխման միջոցին շրջանաւարտներէն երկու յառաջադէմ աշակերտներուն տրուեցան մրցանակներ, ու ժողովուրդը ոգեորեց զանոնց իր ծափերով։

Ա. Բէնդուս

—

նրանցից մէկը, որ պարլամենտական լիբերալ կուսակցութեան անդամ է, 750,000 ֆրանկի Մարքօնի ընկերութեան արժէթուղթ է գնել յօգուտ իր կուսակցութեան գաղանի ֆոնդի։

Այս սպեկուլացիչ յայտնագործութիւններն այլևս տեղ չեն թողնում կասկածելու, որ նրանց արածը մի ծանր սխալ է, մի խոշոր օրինազանցութիւն, քանի այդ վարմունքն արգելող օրէնքը գոյութիւն ունի և յարգված է երկրում, և առաւել ևս մեծ օրինազանցութիւն, երբ նա կատարվել է պետական անձերի, երկրի օրէնքների վրա հսկելու կոչված բարձր պաշտօնեաների ձեռքով։

Ընդունել, որ Ասկվիթի պաշտօնակիցներն անդիտակցօրէն են զանց առել խիստ յարգված և միշտ անխախտ պահված պարլամենտական այդ հինաւուրց տրադիցիան, այդ չափազանց միամիտ կը լինէր։ Միւս կողմից՝ միանգամայն անհասկանալի է, թէ ինչպէս այդ քաղաքագէտ յանցաւորները, ունենալով իրանց առաջ մի խոսամնալից ապագայ՝ որպէս բարձր պաշտօնի և պատուի տէր անձինք, համաձայնվել են մի քանի հազար լիվրի համար զոհել իրանց քաղաքական կարիերան և հասարակական պատիւը, հաստատ իմանալով հանդերձ, որ իրանց կատարած սպեկուլացիաները գաղանի չեն մնալու հասարակութիւնից։ Այս առեղծուածը բացատրելու համար մնում է միայն այն հնարաւորութիւնը, որ օրինազանց մինիստրները, գայթակղված իրանց շուրջը կատարվող խոշոր սպեկուլացիաներից, ենթարկվել են այն յախուռն և հուժկու ձգտումներին, որ սահմանում են կապիտալիստական օպերացիաներն առևտրա-արդիւնաբերական ասպարէզներում և բօրսաներում. ձգտումներ, որոնք ոչ մի արգելքի առաջ կանգնել չը գիտեն և առանց միջոցների մէջ խտրութիւն դնելու՝ կործանում են ամեն ինչ, որ հին է, իր ժամանակն ապրած իր շահածի մի մասը նորից յատկացնում է արժեթղթերի և այդքանով բաւականանալով՝ յետ է քաշվում սպեկուլացիայի ասպարէզից։ Մինչդեռ միւս երկու մինիստրները դրամի համն առած՝ անդադրէն անձնատուր են լինում բօրսային օպերացիաներին և մի քանի օրվայ ընթացքում մեծ թուով արժեթղթեր գնելով ու ծախելով՝ խոշոր գումարների տէր են դառնում։

Սակայն, աւաղ. «Չիք ինչ ծածուկ, որ ոչ յայտնեսցի»։ Գործը բացվում է և հետզհետէ տարածվում հասարակութեան մէջ։ Ամբողջ մի տարի այդ շշուկները հասարակական զանազան խաւերի մէջ պտտվելուց յետոյ՝ անցնում են պարլամենտ, ուր միաժամանակ յատկապէս պանպանողական պատգամաւորներն անպաշտօն կերպով հետաքրքրասէր աւելի կծու անկարկներ և մեղադրանքներ են բաց թողնում մինիստրների հասցէին, մինչև որ մի օր վերջապէս այդ խնդրի մասին պարլամենտում պաշտօնապէս հարց է տրվում կառավարութեանը։ Մինիստր-նախագահ Ասկվիթը լռվին վստահ լինելով իր պաշտօնակիցների վրա՝ յայտարարում է, որ ոչ ինքը և ոչ միւս մինիստրները Մարքօնի ընկերութեան հետ ու ոչ մի գործ չեն ունեցել։

Այս յայտարարութիւնը սակայն չէ կարողանում լուծել տարածված լուրի նոր արծարծումները։ Պարլամենտում պանպանողականներն այնու ամենայնիւ շարունակում են քրքրել մինիստրների օրինազանցութեան շշուկները։ Ի վերջոյ ընտրվում է մի պարլամենտական կոմիսիա՝ լրջօրէն քննելու այդ հարցը, որ մի կատարեալ անարգանք էր դարձել կառավարութեան հասցէին։ Կոմիսիայի կատարած անկեղծ յայտնագործումներն ցոյց տուին, որ ոչ միայն տարածված շշուկները արդարացի են, ոչ միայն ամբաստանեալ մինիստրները սպեկուլացիա են կատարել յօգուտ իրանց անձնական շահերի, այլ և պարտութեամբ կնքվէր ընդդէմ բալկանեան դաշնակիցների և ոչ կատարեալ յաղթութեամբ յօգուտ նրանց։ Օգնութեան կարիքը, տխուր, դառն ու ծանր կացութիւնը միացրած, ամուր համախմբած կը պահէր նման վիճակագիցներին ընդհանուր թշնամու դէմ։

Կատարելապէս այլ բան է, երբ դաշնակիցները յաղթութեամբ են պակել իրանց ընդհանուր ձեռնարկը. «եղբայր» եղել են նրանք մինչև այն սահմանը, երբ հարկաւոր էր տարալել տիրանին և թելադրել նրան հաշտութեան պայմաններ, այսինքն մինչև դաշնակիցների հաշիւների անմերների սարտումը թշնամու հետ։ Դրանից յետոյ արդէն պանսլաւիստական ոչ մի կախարդիչ միջոց չէր կարող «եղբայրական» հաւասարակշռութեան նժարը պահպանել դաշնակիցների միջև, որոնցից ամեն մէկը ունեցել է իրայատուկ ըէալ մոտիվներ՝ թիւրք կառավարութեան պատերազմ յայտարարելու համար։ Սակայն այդ մոտիվներն են, որոնք այսօր ամենայն յստակութեամբ հրապարակ նետվելով՝ անխնայօրէն շեղջակոյտ նետեցին այլ ևս աւելորդ պանսլաւիստական իդէաները, որպէս միայն կարիքի դէպքում յիմարներին ու անգիտակիցներին մոլորեցնելու համար պիտանի գործիք։

B. Intimus

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՄԱՐԱՑԻՆ ՄՏՈՐՄՈՒՆՔՆԵՐ
II

Կործանարար բնազդ

Ժամանակակից քաղաքակրթութիւնն, անհամար սերունդների ստանջալից կանչի, յամառ ու անդուլ աշխատանքի, բեղմնաւոր մտքի յարաշարժ որոնումների և ստեղծագործող ոգու հրաշակերտն ունի և այնպիսի բացասական, անհատի բնութեան, ազատ կեանքի առաջադիմութեան անհամապատասխան ստուերոտ գծեր, որոնցից չարաչար տուժել և տուժում է բանական մարդը և նրա կուլտուրան։

Քաղաքակրթութիւնը զարգացել է, տարածվել և համաշխարհային նուաճումներ է անում ի հաշիւ և ի վնաս մայր բնութեան. թաւաւորում է նրա կուսական գեղեցկութեան տխուր աւերակների վրա։

«Հարստութեանը տիրանալու ձգտումը,— գրում է Բօլլէսը, —և այս ձգտման տխրալի հետևանքներն առաջացրել են բնական մըթերքների թեթևամիտ յափշտակութիւն, մի չարիք՝ որն աւելի ևս տխրալի է, որովհետև աւելի ևս անուղղելի է։

Ներկայումս ոչ միայն անհետացել են աշխարհի երեսից այն վիթխարի անտառները, որ բնութիւնը բուսցրել է հարիւրաւոր տարիների ընթացքում, այլ և երկիրս բոլոր հանքային գանձերը արդէն սպառվել կամ դեռևս սպառվում են այնպիսի ծաւալով, որպիսի ծաւալով երբէք չեն սպառվել մարդկային պատմութեան բոլոր նախորդ շրջաններում»։ («Հրաշալի դար»)։

Ընչաքաղց, աչքածակ մարդը յանուն իր ստոր շահերի խլում է չքնաղակերտ բնութիւնից նրա հրաշակերտ զարդերը, այլանդակում է նրան, զրկում է երկիրը հովասուն անտառներից, փոխում է նրա մեղմ, առողջաբար կլիման, կենսաբեր օդը, լռեցնում է կարկաչանոս ու պարզորակ աղբիւրները, լեռնային արագահոս վտակները և գետակները...

Այդպիսով ամայութեան, մեռելութեան է մատնում այն գրախտանման վայրերը, ուր մի ժամանակ տիրել է կուսական բնութեան անմման գեղեցկութիւնը։

«Քաղաքակիրթ» ժողովուրդներն իրանց սեփական ձեռքերով ոչնչացնում, աւերում են բնական այն հրաշալիքները, առանց որոնց կենսաբար ազդեցութեան տպրելու, բաղմանալու հնարաւորութիւն չունեն։

Կովկասը չը նայած դեռ ևս նոր է ոտ դրել առաջադիմութեան ուղիի վրա, բայց այդ կարճատև ժամանակաւ նրա հարուստ ու հրաշագեղ բնութիւնն որքան սնանկացել, մերկացել և այլակերպվել է։

Թերթեցէք մեր երկիրն այցելած յայտնի ճանապարհորդների և գիտնականների, օրինակ՝ Շօպէնի, Մ. Վագների, Բ. ֆօն-Հակստհաուզէնի, Մերտվէցեվի, Լիչի և այլոց յուշագրերը, ուր նկարագրված կը տեսնէք դարաւոր, ստուերախիտ անտառներ, գեղեցկատիպ պուրակներ, ծաղկատատ մարգագետիններ, հիասքանչ պէյզաժներ և անչափ հարուստ ֆլօրա ու ֆաունա, որոնց միայն տխուր աւերակների արտասուալի մնացորդները լուռ վկայում են մեր անմիտ նախորդների անլուր գազանութիւնների մասին։

Ո՞ւր է Բզովդար պատկան լեռների սաղարթախիտ կաղնու խրոխտ անտառը... իսկ Մայմեխի, Սանամսուրդանի և Աչաուրի

ամեն ինչ, որ կարող է խոչընդոտ հանդիսանալ իրանց ընթացքին. ձգտումներ, որոնք առանց մազաչափ խղճահարանքի արհամարհում ու ոտի տակ են տալիս և՛ տգեղագիտա, և՛ սրբագործված սովորութիւններ և մինչև անգամ օրէնք, միայն թէ գիրին դէպի իրանց նպատակը, դէպի անսահման շահն ու շահագործութիւնը։ Ամբաստանում մինիստրները մի անգամ թոյլ են գտնվել այդ ձգտումների փոքրութեանը ենթարկվելու, այնուհետև հաճելի հոսանքի մէջ արված՝ քշվել, տարվել են անհաշիւ, առանց կարող լինելու հարց տալ իրանց դատողութեանը, խղճին և հասարակական դիրքին։

Պարլամենտում այս հարցը բաւական սուր կերպարանք է ստանում։ Նրա պահպանողական ֆրակցիայի համար մի պատրուակ էր հարկաւոր տապալելու լիբերալ մինիստրութիւնը, և իրօք պահպանողականները խիստ վերաբերմունք են ցոյց տալիս դէպի ամբաստանում մինիստրները, աշխատելով «Մարքօնի՛», «Մարքօնի՛» աղաղակներով դեմագոգիա սարքել ճիշդ այնպէս, ինչպէս մի ժամանակ «Չին-չին չին-չինման» յայտնի աղաղակները (1906) պատճառ դարձան նրանց կրած անաջողութիւններին պարլամենտական ընտրութիւնների ժամանակ։ Բացի այդ, նրանք սպասում էին, որ մինիստրների նախագահ Ասկվիսը իր ութնամեայ պաշտօնավարութիւնից յոգնած՝ հրաժարական կը տար, որպէս զի այդ զնով սրբէր իր երեսի պաշտօնակիցների արատը, մանաւանդ որ մինիստրական համերաշխութիւն ասած բանն Անգլիայում զուտ խօսք չէ։

Խնդրին բոլորովին հակառակ աչքով են նայում ունիօնիստներն ու մանաւանդ լիբերալները։ Իսկ երբ ամբաստանեալները ամբողջ պարլամենտի ներկայութեամբ զըզջանք են արտայայտում ընդունելով որ իրանք սխալ են գործել իրանց կատարած սպեկուլացիայի մասին նախօրօք պարլամենտի փարթամ լանջերի ու փեղերի խղճալի մերկութիւնը...

Կացնի մահաբեր հարուածներին են ենթարկված Լալվարի հսկայ անտառի ներկայ փշրանքները։

Մայը բնութեան հարազատ զաւակի կոծանարար ոգու քսմնելի աւերածութիւններին են դատապարտված այն ամենն, ինչ որ բոլորիս համար գեղարուեստական է, անմոխիթարելի և դրաւիչ։

Մ. Ղազարեան

ՀԵՆԵԿՈՒՄԻ ԻՐՈՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Աճեռաժեսն է ցանքերը ապահովագրել

Շնող գիւղ, 4 յուլիսի

Այսօր երեկոյեան 7 ժամից խաւարը պատեց երկինքը, հունձի սպասող հասկալից արտերի տեսքով հրապուրված և յուսով լցված ուշպարութեան սիրտը բոպէապէս սեացաւ կարկտաբեր երկիւղից. բարեբաղդաբար երկինքը բաւականացաւ առատ հեղեղով, որ տեսեց երկու ժամից աւելի, բայց ոչ մի վնաս չը տուեց։ Ծիշդ է, գետնավոր տներից շատերը ջրով ողողվեցին, ճանապարհները լցվեցին հեղեղներով, սակայն զգալի վնաս չը կայ։ Այսպիսի դէպքերը գալիս են յիշեցնելու, որ մենք վերջապէս մտածենք ցանքսերը կարկուտից ապահովելու մասին։

Բ. Մկրտումեան

Նորութիւններ Դուշէթից

Դուշէթ, 7 յուլիսի

Մի քանի օր առաջ քաղաքի մերձակայ Բազալէթի լճում լողանալիս խեղդվում է 16 տարեկան Եղիա Մովսիսեանը. դիակը գտնվում է և հողին յանձնվում։

Թաղումից մի-երկու օր յետոյ, ջրահեղձի հարազատները գնում են լճի ափը և հակառակ իրանց քահանայի կանխազգոյն առաջադրութեան՝ մորթում են մի ուլ և սաղ-սաղ գցում ջուրը՝ այն մտքով, որ «սատանան ջրահեղձի հոգին բաց թողնի ջրից»։

Տեղիս մանր-վաճառականը, որ շատ ժամանակ չէ, ինչ բացվել է, արագօրէն առաջադիմում է, անդամները աւելանում են, իսկ 6 ամիս առաջ դրամ դուրս տանողները, կանոնաւոր յետ են բերում։

Հացի բերքը այս տարի առատ է։

Ց. Ք. Ապրիլեան

Կեսարիա Տանակերտում

Տանակերտ (Գողթ. գաւ.), 3 յուլիսի

Վերին-Ագռլիսից 2—3 վերստ դէպի հիւսիս գտնվում է Տանակերտ գիւղը, որ գետեղված է մի բլրի լանջին, գեղակի ափին։ Գիւղը շրջապատված լինելով պարտէզ-այգիներով՝ բաւական գեղեցիկ տեսք ունի։ Գիւղի միջով անցնում է մի մեծ առու՝ երկու կողմից ծառազարդ։ Գիւղի կլիման առողջարար է, միայն թէ խմելու լաւ ջրի պակասութիւնը պատճառ է լինում զանազան հիւանդութիւնների։ Բնակիչները բոլորն էլ զօկեր են, մօտ 80 տուն։ Համեմատած Ագուլիսի հետ, բնակիչները աղքատ են, բայց աշխատասէր։ Գիւղը ունի երկու եկեղեցի, մէկը գիւղից մօտ 1 վերստ հեռու դէպի արևմտահարաւ, այգիների մէջ, մի բլրի վրա, որին տեղացիք Բերդակ են կոչում, հնում եղած Բերդակ գիւղի անունով։ Ըստ ոմանց, այդտեղ մի ժամանակ բերդ է եղել։ Գիւղամիջում գտնվող եկեղեցին, որ չորս սիւների վրա հաստատված, փոքրիկ գմբէթով մի շէնք է, շատ խարխուլ դրութեան մէջ է և մօտ քանդվելու, շնորհիւ երէցփոխի անտարբերութեան։ Եկեղեցու գաւթի տանիքը ճաքել է և փլվելուց պահելու համար փայտէ յենարաններ են տուել տակից։

Եկեղեցին անհրաժեշտ է վերանորոգել, քանի որ, ինչպէս լսեցի, մօտ 2000 ր. փող ունի սրան-նրան տոկոսով տուած։

Գիւղը ունի և մի սիրուն, համեմատած հայկական գիւղերի հետ, գպրոցական երկյարկանի շէնք։ Դպրոցը մի-դասեան է, խառն։ Շնորհիւ բազաւորնակ երիտասարդութեան ջանքերի, գպրոցը մի քանի տարի ունեցել է և IV բաժանմունք, սակայն, շնորհիւ գիւղացիների անտարբերութեան, այժմ ունի միայն երեք բաժանմունք։ Դպրոցը այժմ մեծ կարիք ունի նստարանների։ Դպրոցի տարեկան եկամուտը մօտ 600 ր. է, հաշուելով և թոշակադրամը։ Այդ գումարի վրա բազաւորնակ գիւղացիները աւելացնելով 2—400 ր., հրաւիրում են ուսուցիչ և ուսուցչուհի։

Բազում վերջին տարիներս տրվող «զօրական երեկոյթը», որ մեծ աղմուկ է ունենում, կազմակերպում են բազաւորնակ տանակերտցիները իրանց գիւղի դպրոցի օգտին։ 1912 թ. երեկոյթը, որ 5-րդ երեկոյթն է եղել, տուել է զուտ մուտք յօգուտ դպրոցի 850 ր.։

Շնորհիւ ամարանոց եկածների, կենսամթերքների գները բարձրացել են։

Գ. Տանակերտեան

ՂԱՐԱԲԱՂԻ ԼՐԱՒԵՐ
I

Խանքենդ, 2 յուլիսի

Այս տարի Ղարաբաղի տափաստան և լեռնային տեղերի հացի բերքը, ինչպէս սպասվում էր, միատեսակ չէ. դաշտավայրերում շնորհիւ ցրտի և երկար երաշտի՝ բերքը քիչ է, իսկ լեռնային տեղերում ընդհակառակն բաւականին աջող է և, կարելի է ասել, համեմատաբար անցեալ տարիներից լաւ է։

Սակայն այժմվանից արդէն խօսում են, որ դաշտավայրերում բերքը պակաս լինելու պատճառով՝ ցորենը թանգանալու է։

Այդ, ի հարկէ, ցոյց կը տայ մօտիկ ապագան, երբ վաճառելու կը բերեն նոր ցորենը։

Դաշտավայրերում գարու հունձը վերջացած և ցորենի հունձը սկսված է. լեռնային էլ մի շաբաթ է, ինչ սկսել են գարու հունձը։

Ծանօթանալով մեր գիւղացիների հետ, կարող ենք ասել, որ ներկայումս տակաւին գիւղատնտեսական նոր ձևի գործիքները մուտք չեն գործել Ղարաբաղ, ինչպէս ցանկալի է. հին ձևի արօր ու գութան է, որից բաժանվելու ցանկութիւն չէ արտայայտում Ղարաբաղի գեղջուկը։

Գուցէ այդ ցաւալի երևոյթի առաջն առնվի և գիւղացիներին հակացվի նորաձև գործիքների օգտակարութիւնը, եթէ գիւղատնտեսական գիտելիքների մասին հարկաւոր մտապաշար ունենան նրանք։ Ուստի բարւոք կը լինէր, որ, ինչպէս ուրիշ տեղերում է, Ղարաբաղում էլ յաճախ ձեռնհաս մարդիկ գիւղատնտեսութեան վերաբերեալ դասախօսութիւններ կազմակերպէին։

Ղարաբաղում գիւղատնտեսութեան վերաբերեալ դասախօսութիւն անցեալ տարի, շնորհիւ Ալ. Քալանթարի և այլոց, մի քանի տեղերում եղել է, որի համար և շնորհակալութեան արժանի են այդ բեղմնաւոր գործի նախաձեռնողները, բայց ցանկալի է և այս տարի գիւղերում կազմակերպել դասախօսութիւններ, որպէս զի կարելի լինի այդ միջոցներով ցանկալի գիտակցութեան բերել Ղարաբաղի խեղճ ու կրակ երկրագործին։

Մի ուրիշ վնասակար տարր Ղարաբաղում հանդիսանում են մեր տխրահռչակ կապալառուները, սպեկուլանտները, որոնք ամեն ճիգ ու ջանք գործ դրած արդէն պատրաստվում են կլանել և ամբարել շուկայ արտահանված գարին, ցորենը։

Խիստ ցանկալի է, որ ոստիկանութիւնը բարի լինի միջոցներ ձեռք առնել և խստագոյն զանազան կապալառուների մուտքը շուկայ։

Խոտի բերքը այս տարի ընդհանրապէս սակաւ է։

Ա. Ասլանեան

ԱՆԱՐԴԱՐԱՑԻ ՓՈՓԽՈՒԹԻՒՆ ՀՈՒՓՍԻՄԵԱՆ ՕՐ. ԴՊՐՈՑՈՒՄ

Բաքու, 1 յուլիսի

Տեղիս Հռիփսիմեան օր. դպրոցի խստատակ դատավարութիւնից յետոյ չը տեսնված փոփոխութիւն տեղի ունեցաւ ուսուցչական խմբի մէջ։

Հասարակութիւնը, նահանգական դատարանի քրէական բաժնի արձակած վճռից յետոյ, բոպէ առ բոպէ սպասում էր, որ հոգաբարձութեան անդամների մի մասը կը հրաժարվի. ուրիշ կերպ ոչ ոք չէր սպասում։ Սակայն բոլորովին այլ պատկեր բացվեց. պարզվեց, որ այդ խմբակը ոչ մի միտք չունի ապատելու մատաղ սերունդի սրբազան տաճարը իրանց քմահաճոյքներից։

Դժուար էր գիտակից, մատաղ սերունդի կրթական գործին նուիրված ուսուցիչների համար՝ փոխանակ ուսումնարանին ծառայելու ծառայել հոգաբարձութեանը. ուստի երբ հոգաբարձութիւնն «անշարժ եղէցի» ասելով մնաց իր տեղում, ուսուցչական խմբից 4 հոգի հրաժարվեցին։ Հինգ ուսուցիչ էլ հոգաբարձութիւնն ինքը արձակեց։ Ամբողջ կազմից մնացին 4 հոգի, որոնցից երկուսը՝ ուսուցչուհիներ՝ «իրանց խմբակի» հլու հպատակներն են, երրորդը, ուսուցիչ Վարժապետեանը, որ դեռ առաջին տարին է, որի մասին «լաւ-վատ» «գաղափար» չեն կազմել, իսկ չորրորդը, Մայիլեանը, որը շատ էլ սիրելի չէ որոշ խմբակցին՝ նահանգական դատարանում տուած պարզ վկայութիւնից յետոյ, բայց, որովհետև եկեղեցական քառաձայն խմբի խմբապետն է և եկեղեցի յաճախող հասարակութեան սիրելին, ուստի անկարող եղան Մայիլեանի քէֆին կպչել։

Սակայն խնդիրը նրա մէջն է, որ արձակված 5 ուսուցչ.-ուսուցչուհիները միատեսակ մեղք, յանցանք չունէին։

Մէկին հեռացնում են այն պատճառով, որ 4—5 տարի ուսուցչուհի է եղել առանց իրաւունքի, 4—5 տարի օրօրելով թէ այսօր, վաղը, հինգ օրից յետոյ կը բերեմ ատարման վկայականս և այլն, բայց վերջը պարզվել է, որ ոչ վկայական ունի, ոչ ատարել է և ոչ էլ իրաւունք ունէր ուսուցչուհու աւանդելու, սակայն 4000—5000 ր. դասագին ռոճիկ է ստացել։ Հինգ կամ տասը ռուբլի չէ, այլ հինգ հազար, որով երկդասեան դպրոց կարելի կը լինէր պահել։ Արդ, պ. պ. հոգաբարձուներ, մի հատ բանաւոր, ծառայող, գրագիր առանց անցագրի կընդունէիք նաւթարդիւնաբերողների խորհրդի գրասենեակի համար։ Ի հարկէ, ոչ։ Իսկ հասարակական հիմնարկութեան համար, ըստ այդ պարոնների, կարելի է ընդունել։ Առաջին դէպքում անհատականութիւնը պիտի տուժէր, իսկ երկրորդում՝ հայ հասարակութիւնը, ինչպէս և տուժեց է։

Մի-ևս հեռացնում են, որովհետև պատճառ դարձաւ վարկաբեկել, բարոյապէս սպանել այնպիսի մի հիմնարկութիւն, որպիսին օրիորդաց 7-դասեան դպրոցն է և որը քննիչների, դատախազների ու դատարանների դուռը քարշ տալու պատճառ դարձաւ հոգ. իշխանութեան քննչին, 10—15 ուսուցիչների, աշակերտուհիների, նրանց ծնողների և հոգաբարձուներից մի քանիսին և որի մասին դատարանի պաշտօնեաները խիստ ցաւ զգացին և ստիպված եղան գործի քննութեան կէսում դռնփակ շարունակել։

Բայց ինչու՞ հեռացրին ուսուցիչ Բ. Սահակեանին... Այդ ուսուցչի դժբաղդութիւնը նրանումն էր, որ հոգաբ. նախագահին գրաւոր յայտնել էր, որ դպրոցի պատերի մէջ ինչ-որ անպատեհութիւններ են կատարվում ուսուցիչներից և աշակերտուհիներից մէկի մէջ, ու խնդրել էր վերահասու լինել իրանց խնամքին յանձնված դպրոցին, հակառակ դէպքում բարոյապէս ընկած ուսուցչի հետ պաշտօնավարել չէ կարող։ Ահա այդ թղթի կտորի բովանդակութիւնը թռել-ընկել էր նահանգական դատարանի քրէական բաժնումը, և դատի էին հրաւիրել Սահակեանին, որը համարձակվել էր նկատողութիւն անել, ինչպիսի նկատողութիւն տրել էր և հոգաբարձութեան ուշադրութիւնը հրաւիրելով աւ.-ուսուցիչ Սիմ. Հովուեանը։ Վերջինս դատավարութիւնից մի օր առաջ թաքցրեց իր հրաժարականը և ապա գնաց դատարան։

Դրանից յետոյ Հովուեանին և Սահակեանին հոգաբարձութիւնը պիտի շնորհակալութիւն յայտնէր, որ նրանք աչքաբաց կերպով հսկելիս են եղել դպրոցի անց ու դարձերին և նախազգուշացրել հոգաբարձութեանը, մանկավարժական խորհրդին։ Բայց այնպիսի մի դրութիւն ստեղծեցին, որ Հովուեանը թողեց իր սիրած գործը և բաղաւոր պիտի լինի, բայց նա աւելի բաղաւոր էր համարում իրան, երբ դատարկ գրպանով, նիւթական նեղութիւն զգալով սերունդ էր կրթում։ Իսկ Սահակեանին փոխանակ շնորհակալութիւն յայտնելու, նրան էլ հեռացրին այն անճնաւորութիւնների հետ միասին, որոնք 4—5 հազարներ ստանալով խաբել, դպրոցը անբարոյականացրել էին։

Հին ուսուցիչ Արշակ Թադէոսեանը, դատավարութիւնից յետոյ հրաժարվեց, որովհետև նրա առած արդարացի ցուցմունքը դատարանում «որոշ խմբակին» անպատատ էր, և շատ լաւ գիտէր, որ պիտի հեռացնէին։

Առանց մարդաբէ լինելու հէնց այժմեանից ուզում եմ գուշակել, որ առաջիկայ 1913/14 թ. թ. աւելի վատթար է լինելու դպրոցական գործը, քան 1912/13 ուս. տարին եղաւ։

Մառը արմատից պիտի ուղղել, իսկ դպրոցի արմատը հոգաբարձուներն են։

Փարոս

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասեան մնայնագործական կօմիտէտը հանդով պատրաստվում է մասնակցելու ռուս-անգլիական ցուցահանդէսին, որը տեղի պիտի ունենայ Լօնդոնում առաջիկայ հոկտեմբեր ամսում։ Ցուցահանդէսում ցուցադրվելու են փղոսկրից, սկուց, արծաթից և այլ և այլ մետաղներից պատրաստված իրեր, մատուցարաններ, ծխատուփեր, դաշոյններ և այլն։ Մեր երկրի գեղարուեստական ուշագրաւ ստեղծագործութիւնները ցուցադրված կը լինեն այնտեղ։ Ցանկալի է, որ այդ հանդէսանքը մեր արհեստաւորները ուշադրութեան առնեն։

◆ Մեզ հաղորդում են, որ լեռնական մի ժամանակաւոր դպրոց է հաստատվել կաթնատնտեսութիւնից Այրիջա արօտատեղում։ Գիւղական ուսուցիչներից մէկը, որ անցեալներում սովորել է կաթնատնտեսութիւն Դարաքիլիսայում, այս ամառ հաւաքել է իր շուրջ տեղական անամսապահների զաւակներին և ծանօթացնում է նրանց գործնական կաթնատնտեսութեան հետ, հաղորդելով և մի քանի տեսական տեղեկութիւններ։

◆ Մեզ հաղորդում են, որ առաջիկայ ստացաբանական համագումարին կից, որը կայանալու է Թիֆլիսում ներկայ 1913 թ. դեկտեմբերին, պէտք է բացվի ստացաբանական գործիքների ցուցահանդէս։ Մի քանի ֆիրմաներ տուել են իրանց համաձայնութիւնը։

◆ Դէպի Երևանեան նահանգը ուղևորվեց երկրագործութեան մինիստրի կովկասեան լիազօր Կ. Շաշկովսկին, գիւղատնտեսութեան տեսուչ Ս. Տիմոֆէեվի և պաշտօնեայ Ի. Մուլինի հետ։ Նրանք կը գնան Նախիջևան և յետոյ Դարաչիչագի վրայով կը վերադառնան Թիֆլիս։

◆ Երկրագործական մինիստրութեան Կովկասի լիազօրը առաջարկել է Թիֆլիսի նահանգի ու Զաքաթալայի շրջանի պետական կալուածների ու հողերի կառավարչին հաղորդել, թէ ուրեմն կան գիւղատնտեսական միջնակարգ դպրոցի համար յարմար պետական ազատ հողամասեր։ Այդ առաջարկութիւնը կապ ունի Թիֆլիսում նորերս կայացած ագրօնոմական խորհրդակցութեան միջոցին արտայայտված ցանկութեան հետ։ Խորհուրդը ցանկութիւն էր յայտնել, որպէս զի Կովկասում շուտով բացվի երկու միջնակարգ գիւղատնտեսական դպրոց՝ մէկը տափարակ շրջանների համար, իսկ միւսը՝ լեռնային։

◆ Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձուի նորերս հրատարակած 1912 թ. հաշուետուութիւնից առաջ ենք բերում հետևեալ ուշագրաւ թուերը. 1912 թուին շրջանի բոլոր դպրոցների թիւը եղել է 4114, ուսանողների թիւը՝ 393,981։ Համեմատելով 1907 թուի հետ՝ երեքպատիկ աւելացել են թէ դպրոցների թիւը, թէ ուսանողների և թէ նրանց բիւջէները. վերջինս ներկայ տարին կազմում է 14.149,434 ռուբլի։ Գիմնազիաների ու պրոգիմնազիաների թիւն է 40, որտեղ սովորում են 13,837 հոգի. ռուսներ՝ 5890 հոգի (42,5%), հայեր՝ 3437 (24,8%), վրացիներ՝ 2170 (15,6%), վրաց աղնուականների Քութայիսի և Թիֆլիսի գիմնազիաների սաները (1600-ից աւելի) չեն մտնում այստեղ. թուրքեր՝ 590, մնացեալը այլ ազգութիւններ։ Ընդհանուր բիւջէից 2.263,457 ռուբլին ծախսվում է գիմնազիաների ու պրոգիմնազիաների վրա։ Բէալական դպրոցների թիւը եղել է 25, ուր սովորում էին 8045 աշակերտներ, որոնցից ռուսներ՝ 4464, հայեր՝ 1063, վրացիներ՝ 738, թուրքեր՝ 558 և այլն։ Բէալական դպրոցների պահպանութեան համար գործածվել է 1.343,828 ռուբլի։ Օրիորդաց գիմնազիաների և պրոգիմնազիաների թիւը եղել է 54, ներառեալ ուսանողների թիւը՝ 20,539, որոնցից ռուսուհիներ՝ 11,640, հայուհիներ՝ 4102, վրացուհիներ՝ 2428, թուրքուհիներ՝ 156 և այլն։ Այս դպրոցների պահպանութեան համար ծախսված է 1.899,688 ր.։

◆ Դումայի մնտեսական յանձնաժողովը յուլիսի 6-ի իր նիստում քննութեան նիւթ է դարձրել հացի ու մսի սակագները պակասեցնելու հարցերը։ Քննութիւնը պարզել է, որ քառօրդ կօպէկով կարելի է պակասեցնել միայն ցած տեսակի հացի սակագինը. առաջին տեսակի սակագինը պակասեցնելու դէպքում ՀԱՍ կանոն հացավաճառները։ Ուստի հացի սակագնի մասին վերջնական որոշում կայացնելը յետաձգված է երկու շաբաթով։ Մսի վերաբերմամբ որոշվել է տաւարի մսի սակագինը իջեցնել 13 կօպէկի ֆունտը, ոչխարինը 15 կ. և դառանը՝ 17 կօպէկի։ Այդ որոշումը կը ներկայացվի նախ ի հաստատութիւն դումայի, ապա նահանգական վարչութեան, որոնց հաւանութիւնից յետոյ միայն գործածութեան մէջ կը մտնի այդ սակագինը։

◆ Քաղաքային վարչութեան անդամ Մ. Ն. Աթաբէգեանը յուլիսի 15-ից արձակուրդ է ստանում երկու ամիս ժամանակով։

◆ Հինգերորդ քաղաքամասի մի քանի ձայնաւորներ քաղաքային վարչութեան առաջ միջնորդութիւն դարթեցրել, որպէսզի պարտաւորեցվի յիշեալ մասի քաղաքային սանիտարական բժշկին՝ ապրելու 5-րդ քաղաքամասում։ Միևնոյն ժամանակ նրանք հրաւիրում են վարչութեան ուշադրութիւնը քաղաքային բուժարանի խորփուլի բաժանմունքի հակասողջապահական դրութեան վրա։

◆ Քաղաքային դումայի ուսումնարանական յանձնաժողովի անդամ Ա. Ս. Բաբեանը յանձնաժողովին ներկայացրել է դպրոցական շէնքի համար պիտանի քաղաքային բոլոր հողամասերի յատակագիծը։

◆ Մուշի Վերին-Թաղի երիտասարդական ժողովրդ. գրադարանի վարչութիւնը իր շնորհակալութիւնն է յայտնում Թիֆլիսանակ մշեցի Ղազար Պրսէհանին նրա համար, որ սա իր հայրենիքի յիշեալ գրադարանին ընծայել է եօթն ամսվայ «Մշակ»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Գէօրգիէվսկայա հրապարակի վրա № 5 տանը ապրող Թիֆլիսի I կարգի վաճառական Ս. Ս. Բաբեանը յանձնաժողովին ներկայացրել է դպրոցական շէնքի համար պիտանի քաղաքային բոլոր հողամասերի յատակագիծը։

◆ Մուշի Վերին-Թաղի երիտասարդական ժողովրդ. գրադարանի վարչութիւնը իր շնորհակալութիւնն է յայտնում Թիֆլիսանակ մշեցի Ղազար Պրսէհանին նրա համար, որ սա իր հայրենիքի յիշեալ գրադարանին ընծայել է եօթն ամսվայ «Մշակ»։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Գէօրգիէվսկայա հրապարակի վրա № 5 տանը ապրող Թիֆլիսի I կարգի վաճա-

ական կին Շողակաթ Պաւլովնա Ազարեանցը յայտնել է ոստիկանութեանը, որ իր բացակայութեան միջոցին, անյայտ չարագործները մտել են իր բնակարանը և գողացել զանազան արծաթէ ու ոսկէ իրեղէններ 350 ռուբլու արժողութեամբ։ Ոչ ոքի վրա կասկած չէ յայտնված։

◆ Լօրիս-Մելիքովսկայա փողոցի վրա № 4 տանը ապրող Շարլոտա Մօիսէյէվնա Բաբինովիչը յայտնել է խուզարկու ոստիկանութեանը, որ յունիսի 29-ին նա զոնապանի միջոցով ստացել է սպառնական նամակ, որով պահանջվում է իրանից Գէրշ Դիւբիլիրին տալիք իր իբր թէ 515 ռուբլի պարքը։ Ուստի խնդրում է պաշտպանել իր անձը և պատասխանատուութեան ենթարկել յանցաւորին։ Կալանաւորված Դիւբիլիրը խոստովանել է, որ նամակը ինքն է գրել, բացատրելով, որ Բաբինովիչը իրան պարտ է 515 ռուբլի։ Վերջինիս մօտ նա եղել է կառավարիչ, բայց ոռճիկը չէ ստացել։ Չը նայելով որ քանիցս խնդրել է նրան։

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Кавказская Школа» ամսագրի №№ 2 և 3 Թիֆլիս, 1913 թ.։ 2) «Արարատ» ամսագրի № 5, Էջմիածին, 1913 թ.։ 3) «Շեփոր» ամսաթերթի № 4—5, Բուքրէշ, 1912 թ.։ 4) «Современный Міръ» ամսագրի ապրիլի և մայիսի համարները, 1913 թ.։ 5) «Ղարագաղ» ամսագրի № № 1, 2, 3—4 և 5, Թաւրիզ, 1913 թ.։ 6) «Մխիթիւն» ամսագրի № № 15 և 16, Կահիրէ, 1913 թ.։ 7) «Լոյս» ամսագրի № 1 (մայիս), Վան, 1913 թ.։ 8) «Բողբոջ» ամսաթերթի № № 2, 3 և 4, Մարզուան, 1913 թ.։ 9) «Կայծ» ամսագրի № № 9 (մարտ) և 10—11 (ապրիլ-մայիս), Կ. Պոլիս, 1913 թ.։ 10) «Վերածնունդ» ամսաթերթի № 10—11 (մարտ) և 12 (ապրիլ), Կ. Պոլիս, 1913 թ.։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 8 յուլիսի

Հայ Գրողների Կովկասեան Ընկերութեան վարչութիւնը առաջիկայ սեպտեմբերից վերսկսելու է իր հերթական և հրապարակական գրական երեկոյթները։

Վարչութիւնս խնդրում է նրանց, որոնք կը ցանկանան առաջիկայ սեղանին գաստիոսել, իրանց ցանկութեան և ընտրած նիւթի մասին վաղօրօք յայտնեն վարչութեանս այս հասցէով.

Тифлисъ, Правленіе Кавк. Общ. Писателей Армянъ.

Նախագահ՝ Յովհ. Թումանեան
Անդամ-քարտուղար՝
Գիւտ ա.-ք. Աղանեան

—

Թիֆլիս, 8 յուլիսի

Պատրաստ ունեմ տպագրութեան համար պրոֆ. Կլէտտոնի «Ոգու առողջապահութիւնը», պրոֆ. Ֆորէլի առաջաբանով, ծանօթութիւններով և լրացումներով։

Դիմում եմ մասնաւոր անձանց և ընկերութիւններին, որ բարեհաճեն տպագրել այս տաղանդաւոր և մեծ հմտութիւններով գրված աշխատասիրութեան հայերէն թարգմանութիւնը, որ ամենայն ծնողի, ուսուցչի և գիտակցող հասուն մարդու սեղանի վրայ կարող է դառնալ։

Գրքի ծաւալը մեծ չի լինի, երևի 7 տպագրական թերթ։

Այնտեղ նկարագրված է ամեն մի հասակի ոգու առողջապահութիւնը լիովին գործնական մանրամասնութիւններով։ Առանձին գլուխներ են նուիրված՝ մանկութեան, պատանեկութեան, երիտասարդութեան, կատարեալ հասունութեան, ծերութեան, զառամութեան, և միշտ երկու սեռից իւրաքանչիւրը զատ-զատ քննված է իր յատուկ բնութեամբ։

Հեղինակը ծայրայեղ լաւատես է. նա համոզված է և ընթերցողին էլ համոզում է, որ չը պէտք է վախենալ ոչ բնական ընտրութիւնից, ոչ ժառանգականութիւնից, ոչ ընկերական առեղծուածների դժուարութիւններից, որովհետև ոգու որոշ չափով առողջ մնալու համար անսպառ աղբիւրներ կան։ Հարկաւոր է միայն այդ աղբիւրներից զովանալու կամք ունենալ։ Հեղինակը չէ ձանձրանում և ընթերցողին չէ ձանձրացնում, անդադար այդպիսի կամքի անհրաժեշտութիւնը և հնարաւորութիւնը ներշնչելով։ Սեդրաք Մանդինեան

Յ. Գ.—Իմ հասցէն՝ Թիֆլիս, Семеновская д. № 23, кв. 6.

—

Գանձակ, 5 յուլիսի

Քաղաքիս բացակայութեան պատճառով ուշ կարդացի Արշ. Զամալեանի պատասխանը իմ գրութեան վերաբերեալ։

Ինչպէս ընթերցողները տեսած կը լինեն, Ա. Զամալեանը իմ ասածներիս ոչ մի կէտը չէ հերքում, միայն այն բացառութեամբ, որ իրան թեմական առաջնորդ յայտարարել է ոչ թէ փոխանորդարանում փոխանորդի առաջ, այլ ծխական ժողովի ներկայութեամբ։ Թուում է, թէ այդ փաստը աւելի տխուր ընոյթ է ստանում այս պարագայում։

Ժողովրդի դեմոկրատիկ շահերը պաշտպանելը վատ բան չէ. նոյնպէս վատ բան չէ Եւրօպայից ընդօրինակելը. բայց երբ այդ բոլորը ասվում է թող փչելու համար, անվում է որոշ նպատակով, որոշ աստուածի տակ, այն ժամանակ դա աւելի քան զզուելի է և արժանի՝ դատափետման։ Որ Ա. Զամալեանը իր Գանձակ գալով զգեկավարվել է որոշ դիտումներով, դրանում ոչ ոք չէ կասկածում, չէ կասկածում և ինքը Ա. Զամալեանը։ Եթէ նա «իր սրտին մօտ է ընդունում Գանձակը իր շահերով», զարմանալի է, որ Գանձակը փոխադարձաբար չէ պատասխանում...

Ես հոգևոր իշխանութեան հիերարխիայի պաշտպան կանգնել չեմ ուզում. բայց չեմ էլ սիրում թայֆայականութեան և կօպալների իշխանութիւն. կարծում եմ՝ աչքակապուկի խաղալու կարիք չը կայ, նոյնպէս կարիք չը կայ և կեղծ եւրօպականութեան ընդօրինակման։ Կրթական գործում աւելի քան սքանչելի է հասարակութեան աջակցութիւնը. բայց ինչ կապ կայ այդ թէզիսի և Մեսրոպ եպիսկոպոսի արած քայլի միջև։ Գանձակի ծխական ժողովը, իբրև կոլեկտիվ, իբրև ընտրողական մարմին ունի իր հոգաբարձութիւնը. այն, ինչ որ անում է այդ հոգաբարձութիւնը, օրինական թէ ապօրինի է նոյն ծխական ժողովի համար, ասել է, թէ վերջին խօսքը պատկանում է նրան. միայն սանկցիան է, որ գալիս է վերևից։ Եթէ Մեսրոպ եպիսկ.-ը իր «քննութիւնից յետոյ» ապօրինի էր գտնում հոգաբարձութեան և փոխանորդարանի վճիռը, կարող էր հարցը անցնել ծխ. ժողովի քննութեան, այլ ոչ թէ պատուիրել ծխական ժողով գումարել և նոր հոգաբարձուների ընտրութիւն նշանակել։ Դուրս է գալիս, որ ոչ թէ ուսուցչական կարգն են արձակում, այլ հոգաբարձութեան. ինչու՞, ինչ նպատակով, ինչ դիտումով. նրա համար, որ այդ հոգաբարձութիւնը ուզում է արձակել ուսուցչական կազմը, մի կազմ, որ պահանջում է որոշ թայֆայի, որոշ խմբակի, մի կազմ, որի արձակումը ձեռնտու չէ այդ թայֆային։

Կրկնում եմ, կարիք չը կայ աչքակապուկ խաղալ, և թող Արշակ Զամալեանը Եւրօպայից չը խօսի։

Յովս. Տէր-Վարդանեան

—

Մեծ-Ղարաքիլիսա, 25 յունիսի

«Մշակի» 128 համարում կարդացի Մեծ-Ղարաքիլիսայի եկ.-ծխ. երկսեռ դպրոցների աւ-ուսուցիչ Հ. Ամատունու պատասխանը նոյն թերթի № 58-ում լոյս տեսած իմ յօդուածի առիթով, որը վերաբերում էր մեր դպրոցների նախկին հոգաբարձութիւնը, նոր երէցփոխի և նոր հոգաբարձական կազմի ընտրութիւնը և իր՝ իբրև ժողովի նախագահի բռնած դիրքին՝ ընտրութեան գործում։

Ես մի կողմ եմ թողնում Հ. Ամատունու պատասխանի այն մասը, որ վերաբերում է հոգաբարձութեան գործունէութեանը, և զարմանում եմ, որ պարոնը ինքնավստահօրէն լիազօրվում է պատասխանել այն կէտերին, որոնց մասին հոգաբարձութիւնը ինքը լռել է. ուստի պատասխանում եմ յատկապէս Հ. Ամատունուն իբրև ծխ. ժողովի նախագահի. նաև յօդուածիս մէջ շօշափված այն երկու կէտերին, որոնք վերաբերվում էին նրան՝ դպրոցի աւագ-ուսուցչի։

Այդ, յունվարի 20-ի ծխ. ժողովում միանգամայն կանոնաւոր կերպով ընտրվեցին 4 հոգաբարձուներ. իսկ երէցփոխի պաշտօնի համար թեկնածուներ առաջարկվեցին նախ. կին երէցփոխ Յովհ. Յարութիւնեան, Ա. Աղաբաբեան և Գ. Նալբանդեան, որոնցից առաջինը գրական կերպով յայտնեց, որ ինքը հրաժարվում է անդամանալի կերպով. հրաժարվեցին նաև միւս երկու պարոնները։

Եւ որովհետև ժամանակը ուշ էր և ծխ. ժողովը այդ բոլորին յարմար թեկնածու չունէր, ուստի որոշվեց երէցփոխի ընտրութիւնը յետաձգել հետևեալ կիրակի օրվան։ Յունվարի 27-ին, գործակալի յայտարարութեան համաձայն—որը ներկայացնում եմ խմբագրութեանդ—գնում ենք ժողովի, ուր մեզ յայտնում են, որ նախկին երէցփոխ Յ. Յարութիւնեանը զլխելով ժողովրդի թախանձանքին՝ համաձայնել է նորից ստանձնել այդ պաշտօնը և հարկվում է միաձայն ընտրված։ Մենք մնացինք ապշած։ Եւ, ի հարկէ, չը բարեհաճեցին ժողովականներին ցոյց տալ և կամ կարդալ այդ մասին կազմած արձանագրութիւնը։

Իրան Հ. Ամատունուն, ինչպէս և ժողովին մասնակցողներիս շատ լաւ յայտնի է, թէ ինչպէս է պատահել այդ, սակայն որը յայտնի չէ «Մշակի» ընթերցողներին, որոնց հարկադրված եմ բացատրել իրողութիւնը։

Երբ երէցփոխացուները հրաժարվեցին, ժողովը ձեռնամուխ եղաւ հոգաբարձուների ընտրութեան։ Քուէտփերի հաշուակալ ծայրին զրված էր մի սեղան և նրա վրա՝ մի երկու թերթ թուղթ։ Նախագահ Հ. Ամատունու առաջարկութեամբ, ամեն ոք իր քուէն տալուց առաջ գրում էր իր անունը։ Նախագահն այդպէս անել տուեց, ինչպէս ինքն էլ բացատրեց, որպէս զի հեշտութեամբ ստուգէ քուէարկողների թիւը։ Ահա այդպիսի նախամտածված ձևով ստացվում է պատրաստի ստորագրութիւններ՝ և յետագայում նախագահն ինքը կազմելով մի ինչ-որ արձանագրութիւն՝ կպցնում է այդ պատրաստի ստորագրութիւններին և ուզարկում ի հաստատութիւն։ Եւ, ի հարկէ, Հ. Ամատունին այժմ իրաւունք ունի յենվել այդ արձանագրութեան վրա։

Ես իմ յօդուածում ասել եմ նաև՝ «Չեմ կարող թագցնել այստեղ, որ հոգաբարձութեան հաշուեյարդարութեան և երէցփոխի արհեստական միաձայն վերընտրութեան խնդրում նախագահ աւ.-ուսուցիչը մեծ ծառայութիւն ունի կատարած՝ անշուշտ իր վրա ծանրացած դպրոցական այն գումարների փոխարէն, որոնք եղել են նրա տրամադրութեան ներքոյ և որոնց մասին պարոնը մօտ երկու տարվայ ընթացքում պարտք չէ համարել հաշիւ տալ կամ վերադարձնել»։

Հ. Ամատունին չէ կարող հերքել, որ իր իսկ աշխատութեամբ գլուխ բերված կազմարարութեան արհեստանոցի համար հանգանակված և գրքերի վաճառումից գոյացած արդիւնքը եղել է իր տրամադրութեան ներքոյ, և մինչև նոր հոգաբարձութեան ընտրութիւնը այդ մասին հաշիւ չէ տուել ոչ հոգաբարձութեանը և ոչ էլ ծխ. ժողովին։ Այդ մասին հէնց յունվարի 20-ի այդ ժողովում հարց եղաւ, և Հ. Ամատունին խոստացաւ կարճ միջոցում հաշիւ ներկայացնել։

Արդ, եթէ Հ. Ամատունին այդ ամենը համարում է իմ կողմից զրպարտութիւններ, թող փութայ կատարել իր սպառնալիքը՝ ինձ օրէնքի առաջ պատասխանատուութեան ենթարկելու մասին։ Ես ընդունում եմ նրա հրաւէրը և պատրաստ եմ աւելի փաստօրէն ապացուցանել ասածներս։ Ժողովական

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Բոլոր պետութիւնները պաշտօնապէս խորհուրդ են տուել Թիւրքիային չէզոքութիւն պահպանել. այնու ամենայնիւ զրգռումը օրքերի ու ժողովրդի մէջ, շնորհիւ կոմիտէական գործակալների ագիտացիայի, այնքան է սաստկացել, որ հազիւ թէ կառավարութիւնը կարողանայ զսպել։ Թիւրքիայի ակտիվ քայլերի դրդապատճառ են համարվում նաև Գերմանիան ու Աւստրիան։ Լօնդոնի քաղաքական գործիչների ասելով, նրանք դրդում են Թիւրքիային վերսկսել պատերազմը ամբողջ Թրակիան վերադարձնելու նպատակով։

◆ Ռուսաստանի և Ֆրանսիայի ճնշման տակ Ռումինիան մաքրեց Վառնան և Ռուշչուկը ու դադրեցրեց արշաւանքը։

◆ Ռումինական կառավարութիւնը յայտնել է, որ իր արշաւանքը չի դադարի, մինչև որ Բոլգարիան չընդունի Սերբիայի և Յունաստանի առաջարկած պայմանները։

◆ Ֆէրդինանդ թագաւորը աղերսանքով դիմեց եւրօպական միապետներին փրկել Բոլգարիան։ Իր բաղդը վստահանում է աւստրիական կայսրին։

◆ Բոլգարական Ֆէրդինանդ թագաւորը Բօրիս թագաժառանգի հետ անսպասելի կերպով եկաւ ունդարական իր Սմբեսչինա կալուածքը, ուր ոչ ոքի չէ ընդունում։

◆ Ժամանակաւորապէս բոլգարական պետական հաստատութիւնները փոխադրված են Ֆիլիպպօպոլ։

◆ Աֆոնի 418 վարդապետներ, որոնց պէտք է ուղարկէին Ռուսաստան ռուսական վանքերի մէջ ընակեցնելու համար, հրաժարվեցին հնազանդվել նրանց կալանաւորելու համար եկած ռուսաց զօրամասին։ Վարդապետները լուրջ ընդդիմութիւն ցոյց տուին և նոյնիսկ պատնէշներ շինեցին, բայց ջրահանների ոյժով ստիպվեցին անձնատուր լինել։

◆ Սինօդը չէ թոյլատրել առաջին Պետական Դումայի նախագահ Մուրոմցևի գերեզմանի վրա իբրև արձան կանգնեցնելու հանգուցեալի բիւստը։

◆ Պետերբուրգում յուլիսի 3-ին քաղաքի զանազան մասերում կատարված շուրջկալի միջոցին կալանաւորել են 450 հոգի։

◆ Սրաւօնական գործիչներից մի քանիսը ջանք են գործ դնում միացնելու սրաւօնական բոլոր ընկերութիւնները և մի շարք ցոյցեր կազմակերպելով պահանջել ռուս կառավարութիւնից, որպէսզի նա միջամտի բալկանեան գործերին և վերջ տայ եղբայրասպան պատերազմին։

◆ Ընդհանուրի ուշադրութիւնն է գրաւում այն հանգամանքը, որ միաժամանակ Եպաշնիա են վերադարձել Պետերբուրգի դեսպան Մօսենան, Մոսկվայի գլխաւոր հիւպատոս Կաֆակամն և Խարբինի գլխաւոր հիւպատոս Խօնդան։

◆ Իւանշիկայը մի անգամ ևս հեռագրով առաջարկել է Մենգելիային միանալ Զինադադարին, նախագահելով, որ դա վերջին առաջարկութիւնն է և որ նրանից յետոյ կը դիմէ խստութիւնների։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

8 յուլիսի

ԲԻԼՕՍՏՕԿ։ Գործադուլ արին բրդի գործարանների բոլոր բանուորները։ Առաջադրված են անտեսական պահանջներ։

ԲԵՐԼԻՆ։ Շտետտինեան նաւաշինարանում գործադուլ են արել 6700 բանուոր, Համբուրգում՝ 18,000, Բրեմենում՝ 3000։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ժողովրդական լուսաւորութեան մինիստրը մինիստրների խորհրդին ներկայացրեց ուսումնարանական շրջանները կառավարելու նոր կազմի նախագիծը։ Նախագծով շրջանների տարածութիւնը փոքրացվում է և շրջանների հոգաբարձուների թիւը աւելացվում։

Պատկերներ, լուսանկարներ, քանդակներ և գեղարուեստական արտադրութիւնները երկաթուղով փոխադրելու համար սահմանվում է արտօնեալ տարիֆ իւրաքանչիւր վագոնին վերստի համար 10 կոպէկ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԲԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ԲԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թվի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը։ (Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արաց գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Ադստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կարալ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.։ **Պօստսարի գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Ադստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կարալ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցերեկ։ **Մարդասիր գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Ադստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ., Հաջի-Կարալ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ., **Խառն գնացքը** № 106 (Մարդասարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Ադստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցերեկ., Եւլախ 5 ժ. 19 ր. ցերեկ., Հաջի-Կարալ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.։

ԲԱԹՈՒՄԻ.—**Պօստսարի գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցերեկ., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.։ **Մարդասիր գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.։ **Մարդասիր գնացքը** № 9—10 ժ. 20 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.։ **Խառն գնացքը** № 107 (մարդասարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստսարի գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագոններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.։ **Մարդասիր-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.։

ԲՕՐԻՍՈՎ.—**Մարդասիր գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Դօրի 10 ժ. 41 ր. առ., Բորժոմ 9 ժ. 31 ր. ցեր.։ **Մարդասիր** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Դօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բորժոմ 1 ժ. 2 ր. երեկ.։

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՄՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արաց գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պօստսարի գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.։ **Մարդասիր գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.։ **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.։

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստսարի գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.։ **Մարդասիր գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.։ **Մարդասիր գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.։ **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.։

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստսարի գնացքը** № 4Դ./3—7 ժ. 32 ր. եր.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագոններով)—10 ժ. 50 ր. առ.։ **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.։

ԲՕՐԻՍՈՎԻՑ.—**Մարդասիր գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.։ **Մարդասիր գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Բժշկ. Բ. Նաւասարդեանի

Հիմնված 1880 թ.

(Կուկիա, Պ.-բօնցօվի արձանի հանդէպ)

Ամեն օր, բացի կիրակի օրերից

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

«606»-ի եւ «914»-ի ներսրսկում բժշկական խորհրդակցութեամբ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբոյ ու թեան վիճակագ. (Թիֆլիս) հիւանդութիւն։
Բ. Գ. ԱՂԱՍ ԲԵԱՆ—1—2 ժ. նեարդին և երեխայոց հիւանդութ.։
Կ. Մ. ՀԱԿՕՊԱՆ—9½—10 ք ժ. աչքի, նեարդին և նեարդային հիւ.։
Զ. Ի ԲԱԲԱՆՅԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.։
Ն. Ֆ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւանդութ.։
Մ. Գ. ՍԻԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մարթու, վեներական, վիրաբուժութեան և մկանաբ. հիւ.։
Ա. Գ. ԳԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. նեարդին և երեխայոց հիւ. և ծաղկահան.։
Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻԶԷ—1—2 ժ. նեարդին, երեխայոց հ. և ծաղկահան։ Ընդան, մէգի, խուլի հեռագրութիւն։
ԳԻՆ-ԲԺՇԿԻ ՏԷՐ-ԳԱՒԹԵԱՆ—12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.։

ԵՐԵՍՈՆԵՐԸ

Մ. Գ. ՍԻԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Կ. Գ. ԳՈՒՐԳԵՆԻԶԷ—6—7 ժ.

Վճարը 50 կ.։ Զբաւորները ձրի։ Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—73

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՆՈՒԻՈՒ հայոց երկդասեան դպրոցում ըստ ծրագրի աւանդվող բոլոր առարկաների համար հարկաւոր են փորձված

ուսուցիչ-ուսուցչուհիներ,

որոնցից ռուսաց լեզու աւանդողները պիտի լինեն կամ ինստիտուտ աւարտածներ կամ երկար տարիների փորձառութեամբ սեմինարիաւարտ։ Խնդրատուները իրանց մանրամասն պայմանների հետ պիտի ներկայացնեն ուսման և բարեյուսութեան վկայականների պատճէնները հետևեալ հասցէով. Нуха, Попечительству Армянскаго училища.

559. 3—1

Բեթղեհէմի ս. Աստուածածնի եկեղեցու եկեղ.-ծխ. խառն դպրոցի համար

ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ

ուսուցիչ եւ ուսուցչուհի

Դասագինը 30 ռուբ.։ Դասերի թիւը 17—20. Դիմել դպրոցի հոգաբարձական խորհրդի նախագահ Գարեգին Տէր-Ստեփանեանին մինչև օգոստոսի 1-ը, երեկոյեան ժամը 6—7-ը. Կրասնօգորսկայա փող. № 16.

(Հ.) 555. 3—1

ՄԻ ՀԱՅՈՒՀԻ,

որ հմուտ է ջուլհակութեան արհեստին, գլխաւորաբար ուսումնասիրած ունենալով մեքանաբազդարական արհեստը, և ունի վերկայական Շուշու Ջուլհականոցից,

ՈՐՈՆՈՒՄ Է ՎԱՐԺՈՒՀՈՒ ՊԱՇՏՕՆ

Ցնայնագործական հիմնարկութիւններում։

Հասցէն՝ «ՄՇԱԿԻ» գրատնտակ։

(օ.մ.) 553. 3—2

Ղարաբաղի Հայոց Թեմական Հոգեւոր Դպրանոցի

համար ՀԱՐԿԱՒՈՐ ԵՆ բարձրագոյն կրթութեամբ մասնագէտ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

1) Ռուսաց լեզուի համար Գ. բաժանմունքից մինչև Զ. դասարանը երկու ուսուցիչ 24-ական դասով իւրաքանչիւրը։
2) Մաթեմատիկայի համար Գ. դասարանից մինչև Զ. դասարան 23 դասով մի ուսուցիչ։
Դասագինը 60 ռուբլի։
Փորձված և յատուկ մանկավարժական պատրաստութիւն ունեցող ռուսաց լեզուի դասատուներին, բացի դասագներից, կը տրվի նաև առանձին յատկեալ վարձատրութիւն։
3) Նաև յատուկ գեղարուեստական դպրոցն աւարտած մի ուսուցիչ նկարչութեան, գծագրութեան և գեղագրութեան Գ. բաժանմունքից մինչև Բ. դասարան 23 դասով։
Դասագին մինչև կրթութիւն ունեցողին 40 ռ., իսկ ճեմարանաւարտին՝ 50 ռ.։
Գերազասութիւն կը տրվի ճեմարանաւարտին։ Խնդիրները պատաճաւոր վկայականներով կամ նրանց վաւերացված պատճէններով ներկայացնել Հոգաբարձութեան մինչև օգոստոսի 10-ը։
Հասցէն՝ Шуша, Попечительству Армянской Духовной Семинаріи.

Հոգաբարձութիւն Թեմական Հոգեւոր Դպրանոցի

(օ.մ.) 551. 3—2

„ՄՇԱԿԻ“ ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ

Վաճառվում են հետեւեալ հրատարակութիւնների

1) ՄԱՆՐԱՆԿԱՐՆԵՐ, Վրթանէս, I և II հատորներ	1 ռ.	50 կ.
2) ՄԻ ԱՄԻՍ ԱՐԵՒԵԼԲՈՒՄ, Հ. Առաքելեանի		40 կ.
3) ՀԱՅԿԱԿԱՆ ՏՈՊԱԳՐՈՒԹԻՒՆ, Լէօի, հատոր I, երկրորդ տպ.	1 ռ.	20 կ.
4) ԴԷՊԻ ԱՐԱՐԱՏ, Արշ. Մխիթարեանի		40 կ.
5) ԱՐԵՒԵՑՈՂՈՒԹԵԱՆ ԴԷՄ		15 կ.
6) ՁԵՌՆԱՐԿ տրամաբանութեան, հոգեբանութեան, բանաստիւութեան, Հ. Առաքելեանի		50 կ.
7) ԿԵՐՈՆՆԵՐ, բանաստեղծ. հաւաքածու, Վ. Մալէզեանի	1 ռ.	
8) ՅՈՒՇԱՐՁԱՆ ողբացեալ Արփիար Արփիարեանի		40 կ.
9) ՄԻ ՀՆԶԻՒՆԻՆ ՄԻ ԳԻՐ (վեպագրութիւն), Ատ. Մալխասեանցի		40 կ.
10) ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅ ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆՆԵՐ, Մուշեղ եպիսկոպոսի		35 կ.
11) ՃՈՐՏԵՐԻ ԱՋԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ ՅԻՍՆԱՄԵԱԿԸ, նկարներով		15 կ.
12) ԱՆԳԼԻԱՅԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ, թարգմ Մ.-ի		15 կ.
13) ՄԻԼՏՕՆԻ ԿԵԱՆՔԸ եւ զրական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		30 կ.
14) ԳԱԼԻԼԷՅԻ ԿԵԱՆՔԸ եւ գիտական գործունէութիւնը, Հ. Առաքելեանի		25 կ.
15) ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՀՐԱՀԱՆԳ ՀԱՆՐԱՊԱՐՏՈՒԹ, Մակ. եպ. Բարխուդարեանի		80 կ.
16) ԳՐԻԳՈՐ ՕՏԵԱՆ.	1 ռ.	50 կ.
17) ԽԱՂԱՂԱՍԻՐԵԿԱՆ ՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳԻՐՔ. Արթիւր Միլլէրի, թարգմ. Իս. Յարութիւնեանի.		40 կ.
18) ՓԱՐԱՕՆՆ ՈՒ ՀԱՆՃԱՐԸ, Աւ. Եղեկեանի.		15 կ.
19) ОТВѢТЪ АРХІЕПИСКОПА МЕЛХИСЕТЕКА МУРАДЬЯНА НА ПОСЛАНІЕ РИМСКАГО ПАПЫ ЛЬВА XIII.		20 կ.
20) ՏՈՒԲԵՐԿՈՒԼՕԶԸ, ԹՈՒՔԱԽՏԸ ԵՒ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ, բժ. Արտ. Շիսանի		25 կ.
21) ТУБЕРКУЛОЗЪ, ЧАХОТКА и ОБЩЕСТВО, բժ. Արտ. Շիսանի		25 կ.

Նրանք, որոնք յիշեալ գրքերից մի-մի օրինակ կը պահանջեն մեզանից՝ փողը կանխիկ ուղարկելով, կը ստանան 30% զեղչ և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադրիր վճարով պահանջողներին զեղչ կը լինի միայն 25%։ (6) 10—2

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ

ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ

(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)

կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրոշիւրներ, բլանկներ, աֆիշներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեքարտեր եւ այլն։

Ընդունվում են տպագրական պատուէրներ հետեւեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, աբխազերէն և լեռնականների բարբառով։ Պատուէրները կատարվում են մաքուր, ճշդօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։

Պատուիրողների ցանկութե